ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 2,710 — Կ. ՊՈԼԻՍ. 1905, ՕԳՈՍՏՈՍ 9 — 22 — 20 ՃԷՄԱԶԻ ԻԼ ԱԽ", 1323 — 9 ԱՂՍՈՍ 1321 — ԵՐԵՔՇԱԲԹԻ

بوزانتيون
اينجه يومى و سياسى غزته، صاحب امتياز و مدير مسئولى
بوزانت كچيان
مطبعه و اداره خانه سى باب عالى جاده سنده ۲۳-۲۵ نومرو ده

Բիւզանդիոն

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱՅԻՆ ԹԵՄԵՐ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ

Ա.

(ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔՆ ԵՒ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ)

Առեւտրական գործի պատճառաւ, Էտիրնէի կուսակալութեան զանազան մասերուն մէջ ըրած յաճախակի ճամբորդութիւններուս միջոցին ինծի համար մեծ փափաք մը եղած էր տեսնել նաեւ կուսակալանիստ կեդրոնը։ Անցեալ Մայիս 17ին վերջապէս յաջողեցայ այդ փափաքին գոհացում տալ։

Էտիրնէ քաղաքը լաւ տպաւորութեան մը ներքեւ ձգեց զիս։ Ամէն անոնք որ Կ. Պոլսոյ պէս ճոխ և բազմամարդ քաղաքէ մը կ'բաժնուին երթալ գիւղաքաղաքի մը կամ գիւղի մը մէջ ապրելու համար, իրենց առաջին տպաւորութիւնն աննպաստ կ'ըլլայ, վասն զի մարդ ապրելու համար այդ տեղերը, իր սովորութիւններուն մէջ զգալի փոփոխութիւններ մտցնելու պէտքը կ'զգայ։ Միջավայրը՝ շատ հեռու ձեր ապրածէն և տեսածէն, տեսակ մը անհրապոյր կեանքի օրօրան կ'դառնայ։ Կ'զգաս թէ ընդարձակութեան, բազմութեան եւ շէնութեան վարժուած աչքերդ նեղ կը գտնեն քաղաքին շրջապատն և նեղկուկ փողոցները, որք ոչինչ ունին իրենց մէջ շահեկան քեզի հետաքրքրող։ Էտիրնէի մէջ մարդ այդ տպաւորութիւնը չէ որ պիտի ունենայ, ինքզինքը խոշոր և լայնանիստ քաղաքի մը մէջ գտնելով։ Էտիրնէ մտնելու համար ճամբորդին հիմա մէկ սովորական ճամբայ մը կայ, որ է երկաթուղին։ Եւ անոնք որ երկաթուղիով կը մտնեն Էտիրնէ, իրենց առաջին քայլին հետ մէկտեղ պիտի զգան թէ կարեւոր քաղաք մը կ'ողջունեն։ Այս առաջին լաւ տպաւորութիւնը պիտի կրնա՞յ պահել մարդ մինչեւ վերջը. ատիկա այնպիսի հարցում մ'է որուն ամէն մարդ իր տեսակէտներով կրնայ պատասխանել։ Իմ կարծիքիս գալով, ես կրնամ ըսել թէ Էտիրնէի կայարանը մտած վայրկեանիս մուտքի տպաւորութիւնն առանց ո և է այլայլութեան պահեցի մինչեւ ելքս քաղաքէն։ Կայարանը արդէն շէնք մ'է և Թերեւս Րումելիի երկաթուղւոյ կայարաններուն մէջ միակը, որ ներկայանալի հանգամանք մ'ունի իր քարուկիր և գեղեցիկ շինութեամբը։ Կայարանը բուն քաղաքէն կէս ժամուան հեռաւորութիւն մ'ունի։ Այն ճամբան որ կայարան և իր շրջակայ նորակազմ Գարա—Աղաճ գիւղը կամ արուարձանը կ'միացնէ քաղաքին՝ հրաշալի գեղեցկութեամբ օժտուած կառքի ճամբայ մ'է, եզերուած հսկայ ծառերու շարքով մը որք կ'ճեղքեն կ'անցնին ուռենիներու պզտիկ անտառ մը մէջէն։ Այս ճամբան զմեզ կ'առաջնորդէ բուն քաղաքն որ աշխարհագրական նպաստաւոր դիրքի մը և ջրաշատ ու արգասաւոր երկրի մէջ կառուցուած ցամաքային քաղաք մ'է, շրջապատ ունենալով 8—9 մղոն և զետեղուած դաշտավայրի մը մէջ որուն միօրինակութիւն հազիւ թէ քանի մը բլուրներ կ'խանգարեն։ Էտիրնէ աշխարհագրական դիրքով կ'իյնայ Կ. Պոլսէն մերձաւորապէս 95 մղոն դէպի արեւմտեան հիւսիս և անկէ 6 օթեւանի հեռաւորութեամբ։ Մերձաւոր հաշուով մը առաւօտեան եղանակի մէջ 5 կամ 6 օրուան ճամբայ մ'է իսկ ձմեռը 8 կամ 9 օրուան։ Այսօր երկաթուղին այդ հեռաւորութիւնը 7-8 ժամուան զեղչած է։ Արեւելեան երկաթուղւոյ ծամծաւա ճամբով Էտիրնէ Կ. Պոլսէն հեռու է 319 քիլոմեդր։ Քաղաքը շինուած է խորհրդաւոր տեղւոյ մը վրայ, այսինքն հոն ուր երեք մեծ գետեր Մարիձա, Թունճա և Արտա իրարու կ'միանան։ Մարիձա՝ մեծագոյնն այս գետերուն նաւարկելի է Ֆիլիպպէէն սկսեալ մինչեւ Էնոս՝ ուր կ'թափի Միջերկրական Էրկէնէ գետին հետ միանալէ յետոյ։ Արտա հարաւէն ճիւղը կ'կազմէ և Էտիրնէ քաղաքը կ'եզերէ հարաւէն կողմէն, Գարա Աղաճ արուարձանն և կայարանը բուն քաղաքէն բաժնելով։ Թունճա հիւսիսային ճիւղն է և նոր քաղաքը կ'կիսէ մինչ հին քաղաքը լոկ կ'եզերէ։ Մարիձա կամ Մէրիճ վաղածանօթ է և յիշուած պատմագրութեանց մէջ Թոմպոս անուամբ։ Աւելի յետագայ ժամանակներու մէջ կոչուած է յունարէն Էվրոս իսկ լատիններէն Հէպրուս զոր Պլուտարքոս կ'յիշատակէ(*)։ Այս գետը մեծագոյն գետն է Թրակիայ։ Իր ջուրերու առատօրեայ պաղութիւնը համբաւուած է Վիրգիլիոսի և Օվիտիոսի գրչին տակ։ Պլինիոս՝ հնագոյն ժամանակաց ներկայացուցիչ մը և Ճիհաննիւմա՝ մերձաւոր ժամանակներու աշխարհագէտ մը այս գետին ակին մօտ՝ ոսկիի աւազ ջուրերուն հետ խառնուած ըլլալը կ'հաւաստեն։

Արտա՝ Մարիձայի օժանդակն իր անունը կ'առնէ Արտա անուամբ քաղաքէ մը որ հիմա անյայտացեալ է։ Թունճա՝ հաւանական ենթադրութեամբ մը կ'կարծուի կոչուած ըլլալը Թրակիոյ Թոնզօս հին քաղաքին անուամբն զոր կ'յիշատակէ Պտղոմէոս։ Ուրիշներ կ'կարծեն թէ Թրակիոյ Դէնարոն գետն է որ յունական մատենագրութեանց մէջ յիշատակուած է և ըստ այլոց Սուիտասէ յիշատակուած Թրակիոյ Դաքսոս գետը կ'կարծուի ըլլալ(**)։ Այս երեք գետերը քաղաքին բնական բովանդակ գեղեցկութիւնը կ'կազմեն, վասն զի Էտիրնէ դաշտավայրի մը մէջ կառուցուած ըլլալով բոլորովին զրկուած է ուրիշ առաւելութիւններէ։ Ժողովուրդն իրեն զբօսանքի վայրեր ըրած է գետեզերքները՝ որոնք մանաւանդ Մայիս ամսուան մէջ—յորում մեք բախտ ունեցանք վայելելու—զարդարուած վարդերով ճոխացած պարտէզներով բնական գեղեցկութիւն մը կ'ներկայացնեն։ Տեսարանը մանաւանդ հաճելի է հոն գետերու վրայ, որք պղտոր բայց հանդարտ մակերեւոյթ մը կ'ներկայացնեն հեռուէն դիտողին, մինչ անմիջանի կ'առուները պարզապէս իրենց ճամբուն վրայ ամէն բան քշել տանելով։ Առ հասարակ անոնք եզերուած են հսկայ ուռենիներով որք ինչ որ իրենց արմատներով կ'քաղեն իրենց վայրահակ ոստերէն ի վար կ'կաթկթեն լալագին աչքերէ սահող արցունքներու պէս տխուր մելամաղձոտ պատկեր մը գծելով դիտողին աչքերուն։ Միակ անպատեհութիւնն որ այս գետերէն կուգայ քաղաքին ձմեռուան և գարնան եղանակի այն արհաւիրքն է որ մերթ կ'կրէ Էտիրնէցի ժողովուրդը որուն մտքին մէջ այլ եւս յարատեւ դրացնութեամբ մը Մարիձա իր օգնականներով անձնաւորուած է։

Ամառնային եղանակին մէջ այնքան հաճելի հանդարտութեամբ մը օժտուած գետերը ձմեռուան եղանակին անզուսպ կատաղութեամբ մը կ'օժտուին Պալքանի հեղեղներէն զօրացած և իրենց անկողինները նեղ գտնելով կ'ողողեն քաղաքը նիւթական կորուստներ տալով։ Հին քաղաքը, որ բերդաքաղաք մ'էր, սահմանափակ ըլլալով ազատ էր այդ ողողումէ աղէտքէն։ Հիմա, ընդհակառակը, շրջապատուած է ընդարձակ արուարձաններով որոնք գետերու այս ու այն կողմը կ'իյնան։ Նախկին բերդն այսօր գոյութիւն չունի, միայն քանի մը տեղերու անուններ կ'հաստատեն անոր գոյութիւնը։ Բարեբախտաբար, գտնուած է Միւթէֆերրիգա Ապտուրրահման անուն Էտիրնէցի մը որ 1635ին վաղամեռիկ ունեցած է գրելու Էտիրնէի արաբերէն տեղագրութիւնը զոր մեզի ներկայացուց Էտիրնէի մէջ Գեր. Դանիէլ Ծ. վրդ. Ցակոբեան։ Այդ գործէն է որ օգտուած է—ինչպէս կ'ըսէ ինքը— Հ. Ղուկաս Ինճիճեան, իր աշխարհագրութեան մէջ մանաւորապէս քաղաքին բերդին վրայ խօսած ատեն։

Ասկէ կ'հետեւի թէ Օսմանեան տիրապետութեան առեն թակաւին գոյութիւն ունէր Էտիրնէի բերդը, որ վերջէն կամաց կամաց անհետացած է։ Այսօր քաղաքին այն մասն որ այդ նախորդ բերդին մէջ կ'շրջապատուէր, կ'կոչուի Գալէ իչի, որչափ որ այլ եւս բերդը գոյութիւն ունենալէ դադրած ըլլայ։ Ըստ այդ տեղեկագրող Միւթէֆերրիգա Ապտուրրահմանի, քաղաքը շրջապատուած էր բերդով մը, որուն իւրաքանչիւր կողմը կային տասներկու աշտարակներ։ Թունճայի վրայ կար քառակուսի բերդ մը որուն չորս անկիւնները կային մէյ մէկ բոլորակաձեւ աշտարակ, որոնցմէ մէկը կ'գտնուէր Իւչ շէրֆէլէ մզկիթին առջեւ, երկրորդը՝ Իւլէֆէ Գալէ-ս ըսուած տեղը, և երրորդը՝ Կէբէ ըսուած տեղը շինուած էր և 40—50 քայլաչափ հեռու էր բերդէն Թունճայի եզերաց վրայ և պատով մը կցուած բերդին։ Անոր դուռը կ'կոչուէր Կէբէ Գաբուսու կամ Սու Գաբուսու, վասն զի այս աշտարակին մէջ է ջուրի բաժանման տեղը (Թագսիմ), իսկ չորրորդին տեղը չի պարզեր։ Իսկ բերդին ամբողջութիւնն ունէր ինը դուռներ, որոց անուններէն ոմանք մինչեւ հիմա Էտիրնէցիք պահած են աւանդաբար։

1. Գալէ գաբուսու որ հաւանաբար այս կոչումն առած է վերոյիշեալ առաջին աշտարակին առաջքն իյնալուն համար։ 2. Ալի Փաշա չուկային Բէհրէնտիլէր հասնող դրան տեղը։ 3. Թէֆ գաբուսու, վասն զի առաջ ներքնաթաղմէ էր Թօֆհանէն ուր շինեց Սուլթան Մէհմէտ Բ. Ֆաթիհ Կ. Պոլսոյ գրաւման համար գործածուած Թնդանօթները։ Այս դուռը կ'հանէ Աղաճ Բազար։ 4. Գաֆէս գաբուսու որ կ'հանէ այժմու Հաֆիզէ Բէզէզթանի կողմը։ 5. Քէյճէլէր գաբուսու որ կ'կոչուի նաեւ Գաղանճըլար գաբուսու։ 6. Օլլէն Գաբուսու՝ այսինքն գաղտնի ուղի որ փոքր և անշէն տեղ մ'էր շինուած Կէբէ գաբուսի մօտ։ 7. Մինճա գաբուսու որ կ'բացուէր Տաբիլ Հաթիպ մզկիթին մօտ։ 8. Թավուք գաբուսու որ կ'բացուի Թահբէլ գալէի կողմը, և վաճառատեղի էր հաւու առուտուրին։ 9. Իւնճէլէր գաբուսու որ հաւանաբար Սաամպլ գաբուսու անուամբ ծանօթ էր ըստ Ապտուրրահմանի. կ'իյնայ Պէհ Բազարը կողմը։ Ասոնց վրայ կ'աւելցնէ տասներորդ դուռ մ'ալ որ է Օրթա Գաբուսու որ Ալի փաշայի չուկային կիսուն վրայ կ'իյնայ։

Ասոնցմէ ամէնէն շատ գործածուած անուններն են Թաշ—Գաբու՝ որ Հայոց առաջնորդարանի բաժանման համաձայն երկու եկեղեցիներն իրարմէ բաժնող կէտն է և Օրթա—Գաբու որ չուկային համար կ'գործածուի։ Միւսները թերեւս կ'գործածուին բայց մեք լսելու առիթ չունեցանք դժբախտաբար։ Հիմա, ինչպէս քիչ առաջ ըսինք, ոչ պարիսպներէն, ոչ աշտարակներէն և ոչ ալ դռներէն հետք չէ մնացած։ Ցոյց տրուած տեղէն միայն դատելով մարդ կրնայ ըմբռնել թէ հին քաղաքը ի՛նչ ընդարձակութիւն ունէր։ Այսօրուան քաղաքը բաղդատելով այդ հին քաղաքին հետ կրկին ընդարձակութիւն մը առած է գրեթէ կազմութեամբ Գըյէք, Եըլտըրըմ, Աբդալըք և այլ քանի մը թաղերու, որոնք Գալէ իչէն կ'շրջապատեն և քաղաքն անհամեմատ կերպով կ'ընդարձակեն։ Եւ ինչպէս անուններէն կ'երեւի, անոնք Օսմանեան տիրապետութեան տակ կազմուած են, մանաւորապէս մեծագոյն Սուլթաններու Էտիրնէի առած կարեւորութեան պատճառաւ։ Այն նոր թաղերու կազմութիւնն հարկ անհրաժեշտ կ'դարձնէր նոյն իսկ քաղաքին զանազան մասերն իրարու կցելու համար կամուրջներու գոյութիւնը՝ վասն զի երեք գետեր քաղաքը բաժան բաժան կ'ընեն։ Ասոնք ալ մեծ մասամբ Օսմանեան տիրապետութեան տակ շինուած են պէտքերուն և քաղաքին ընդարձակութեան բերմամբ։ Անուններն ալ արդէն նոյնը ցոյց կուտան, թէեւ անհաւանական ալ չէ բոլորովին՝ նախապէս ուրիշ կամուրջներու գոյութիւնն ունենալը։ Ինչպէս քիչ մը վերջն յիշատակեցաւ, բերդին չորրորդ դուռը (Գաֆէս Գաբուսը) կ'վերջանար դէպ ի Միխալ Քէօփրիւսի, որ կ'գտնուի քաղաքին հիւսիսային կողմը դէպ ի Ֆիլիպէ տանող ճամբուն վրայ։ Ինչպէս այն անունը ցոյց կուտայ, իբր գլխաւոր հաղորդակցութեան պողոտայ հնագոյն կամուրջը պէտք է նկատել զայն Էտիրնէի։ Այսօր այդ կամուրջին տեղը կը բարձրանայ հոյակապ նորակառոյց քարաշէն կամուրջ մը, որ տարի մը առաջ աւարտած է բազմածախս շինութեամբ մը, և ի պատիւ ՎՍՀ. ԿԱՅՍԵՐ այսօր կ'կոչուի Համիտիէ Գէօփրիւսի։ Այս կամուրջին շինութիւնը բարիք մը եղած է Էտիրնէի համար, վասն զի հոն գտնուած հնագոյն կամուրջը —զոր յետոյ նորոգած էր Պաղտատի բերդը գրաւող Գարա Մուսթաֆա փաշան, Ջանիւք Էտիրնէի Պօսթանճի պաշի Սինան աղայի ձեռքով— ժամանակին ընթացքին մէջ քշուած էր ջուրերէն, և անոր տեղը կառուցուած փայտակերտ կամուրջները միայն 7—8 ամսուան կեանք մը կ'ունենային սովորաբար և ամէն տարի ջուրերու յորդման առթիւ կ'տարուէին, հաղորդակցութեանց ընդհատում յառաջ բերելով։ Մնացեալ գլխաւոր կամուրջներն են Սէրրաճխանէ գաբուսու, որ տասը կամարներով քարակերտ կամուրջ մ'է Էտիրնէի Պալատին մօտ շինուած Շէհապէտտին փաշայէն 1451 թուականին։ Սուլթան Պայազիտի անուամբ կան նաեւ երկու կամուրջներ քարաշէն, մէկը Պայազիտի մզկիթին մօտ Թունճայի վրայ, եւ միւսը Եըլտըրըմ Պայազիտի մզկիթին մօտ։ Այս վերջինը նորոգած է Սուլթան Սիւլէյման 1544ին։ Նոյնպէս Սէֆէր Շահին Թիւրպէին մօտ կայ ուրիշ կամուրջ մը, շինուած 1601ին։ 1616ին Էթմէքճի զատէ Ահմէտ փաշա շինած է ուրիշ կամարներով քարաշէն փառաւոր կամուրջ մը։ Ասոնցմէ զատ կան նաեւ ուրիշ փայտաշէն կամուրջներ։

ԱՐՇԱԿ Ս. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

(*).—Հ. Ղ. Ինճիճեան Աշխարհագրութիւն, հատոր Զ., էջ 3—4։
(**).—Տես նոյն էջ 3։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԼԱՍՏԻԿԻ ԱՌՈՒՏՈՒՐԸ

ՁԳԱԽԷԺԷ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ, ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Բ.

1843ին Կուտիըր Ամերիկայի մէջ գտաւ ձգախէժին տաքի ու պաղի դիմանալուն միջոցը (vulcanisation), որով վերոյիշեալ անպատեհութեանց առաջքն առնուեցաւ։ Vulcanisation կ'կոչուի այն գործողութիւնը, որով բարձր բարեխառնութեան մը մէջ քիչ մը ծծումբ կ'խառնուի քաուչուքին։ Ֆրանսացի մը, Մօրէլ, ծծումբի չափն աւելցնելով գտաւ կարծր քաուչուքն (1851), որով կ'շինուին սանտրեր, կոճակներ և սեւ գոհարեղէններ։ Այս ճարտարարուեստը մեծապէս զարգացաւ Ֆրանսայի, Անգլիոյ և Գերմանիոյ մէջ։ Առանց մտնելու քաուչուքի պատրաստութեան մանրամասնութիւններուն մէջ, քանի մը տեսակները միայն յիշենք, որոց վրայ գործ կ'ըլլայ առեւտուրի մէջ։

Առաջնակարգ … — Թելի, կապի, և առաձիգ ու թեթեւ առարկաներու համար։ Առ այս կ'գործածուի Բարա քաուչուքն, որ 3—10 % կ'ծծմբուի։

Հանդոյցեալ (Օրւնդ) … — Ասով կ'շինուին փոքր խողովակներ, թուղթերու տրցակներ կապելու յատուկ օղակներ, ևն.։ 100 մաս Բարա քաուչուքի մէջ 25 մաս նարնջագոյն դեղին ծարրաքարի ծծմբատ խառնելով յառաջ կուգայ այս տեսակ քաուչուքն։

Սեւ … — Ասով կ'շինուին ոտնամաններ, և ուրիշ այլ և այլ տեսակ անթափանց առարկաններ, խցաններ, խողովակներ, թերթեր։ Այս քաուչուքն յառաջ կուգայ Բարա տեսակ քաուչուքին մէջ խառնելով 8 % ծծումբ և 15 % քարածուխ (մրուտէսէնկ)։

Սպիտակ … — Կ'գործածուի արդուզարդի առարկաներու, զգեստներու, ևն. համար։ Կազմուած է քաուչուքէ, զինկէ, օքսիտէ և 4 % մաս ծծումբէ։

Խցան (Tampon Joint). — Ծծմբացեալ քաուչուքին դիմացկունութիւնն աւելցնելու համար, հաստատուն և խիտ փոշիներ կ'աւելցուին վրան, ինչպէս կան, կլուէիկի (baryte) ծծմբատ, կապարի բնածխատ, ևն.։

Կարծր Քաուչուք (Ebonite, Vulcanite). — Ասիկա ընդհանրապէս կ'շինուի Ճավայի քաուչուքէ, որուն գինը շատ սուղ չէ, վրան աւելցնելով հասարակ ծծմբացեալ քաուչուքներու մէջ եղածին երեք անգամ աւելի ծծումբ։ Երկու երեք ժամ կ'սպասուի, մինչեւ որ ջերմութեան աստիճանը բարձրանայ 135ի, այսպէս կ'ձգուի եօթը ժամ, ապա մեղմիկ մը շոգին դուրս կը թողուի, և քաուչուքն կ'պաղի կամաց կամաց։

Քաուչուք … — Շատ մը հին ոտնամաններ ծծմբական կամ քլորական թթուի ազդեցութեան կ'ենթարկուին 3½—5 մթնոլորտաչափ ճնշումի ներքեւ. այսպէս ձեռք բերուած զուտ քաուչուքն դարձեալ կ'գործածուի։

Քաուչուքն շատ բաներու կ'գործածուի, ինչպէս շոգեշարժ մեքենաներու, ջրհանի, ամէն տեսակ խողովակներու, սկսեալ ոռոգման յատուկ խողովակէն մինչեւ արուեստական ծաղիկներու համար, տպագրական և հիւսածաղէնի գլաններուն համար, կնիքներու, թթաններու յատուկ կարծր ձգախէժէ բռնիչներու, բժշկական գործիքներու, անթափանց վերարկուներու, դիւրատար բարձիկներու և մանճակներու, առաձիգ հիւսուածեղէններու, ծնրակալներու, խաղալիկներու և այլ եւ այլ բաներու համար։ Հիմա քաուչուք կը գործածուի մեծ քանակութեամբ երկանիւներու և օդամալիկներու համար։ Ֆրանսա անհագին քանակութեամբ քաուչուք կ'սպառէ, այնպէս որ օտար երկիրներէ քաուչուք ներածելու պէտք կ'ունենայ. այս է պատճառն որ ներածութեանց քանակն արտածութեանց քանակէն աւելի է։ Այսպէս, 1903ին ներածեց ամէն տեսակ քաուչուքէ առարկաներ և նիւթեր 72 միլիոն 982,430 հազար ֆր. արժողութեամբ, իսկ 1904ին՝ 30 միլիոն 909,000 ֆր, արժողութեամբ։ Արտածութեանց գումարն է 1903ին՝ 38,587,268 ֆր., և 1904ին՝ 41,737,000 ֆր.։ Համագումար՝ 111 միլիոն 569,698 ֆր.՝ 1903ին, և 122,646,000 ֆր.՝ 1904ին, քաուչուքի ընդհ. առեւտուրին տեսանելեալ ի Ֆրանսա։ Կ'տեսնուի թէ որքան օգտակար գործածութիւնն աւելցաւ, այնքան ալ քաուչուքի առեւտուրն ընդարձակուեցաւ ի Ֆրանսա։ «Քաուչուքի գաղթային ընկերութիւն» մը կազմուեցաւ՝ մեր գաղութներուն մէջ քաուչուքի արտադրութիւնը զարգացնելու համար։ Այս ընկերակցութեան նպատակն է միջոցներ ձեռք առնել՝ բնիկներուն ցոյց տալու համար թէ ի՛նչ են լաւագոյն միջոցները քաուչուքն հաւաքելու համար. բաց աստի, ընկերութեան նպատակն է ձգախէժ արտադրող բոյսերու մշակումը քաջալերել և նպաստել ձգախէժի առեւտուրին և ճարտարարուեստին Ֆրանս. գաղութներուն մէջ և անոր վաճառման Ֆրանս. հրապարակներուն վրայ։ Երբեմն ձգախէժի գլխաւոր հրապարակն էր Անվերս։ Պելժ այս մեծ նաւահանգիստը, որ 1891ին 21,000 քիլոկրամ ձգախէժ կ'ընդունէր, 1896ին կ'ներածէր աւելի քան 1 միլիոն քիլոկրամ, և անկէ ի վեր այս թիւն աւելցած է։ Ցաւալի է որ Ֆրանսա ձգախէժի գլխաւոր հրապարակ մը չունի իր նաւահանգիստներուն մէջ, մինչ իր գաղութները մեծաքանակ ձգախէժ կ'արտադրեն։ Բարեբախտաբար, Պորտօ ձգախէժի կարեւոր հրապարակ մ'եղած է։ 1898ին կ'ընդունէր 51,000 քիլոկրամ ձգախէժ. այս թիւն 1899ին բարձրացաւ 176,000ի, 1900ին՝ 239,000 քիլոկրամի, 1901ին՝ 235,000, 1901ին՝ 678,000 և 1903ին՝ 1,113,000 քիլոկրամի։ 1904ին Սուտանի և Կամպիի տեսակներուն արտադրութեան մէջ յառաջ եկած նուազման պատճառաւ 200,000 քիլոկրամ պակաս եղաւ ներածումն ի Պորտօ, բայց 1905ի առաջին ամիսներուն այս թիւը բարձրացաւ 1 միլիոն 183,703 քիլոկրամի։ 1904ի նոյն ժամանակամիջոցին 440,000 քիլոկրամին դէմ 582,000 քիլոկրամ։

Հիմա քննենք ձգախէժի առեւտուրն ի Թուրքիա.—Աւստրիոյ վերջին հինգ տարիներուն թիւերը, ըստ մաքսային Վարչութեան.—Ոտնաման՝ 1898—99՝ 666,528 ղրուշ, 1899—1900՝ 5,235,464 ղշ., ձգախէժէ խողովակներ, ևն.՝ 1897—1898՝ 2,048,569 ղշ., 1898—99՝ 1,181,752 ղշ., 1899—1900՝ 1,972,722 ղշ.։ Տօլին միայն 500,000 զոյգ ոտնաման կ'ներածուի Պոլիս։

ԷՐՆԷՍԴ ԺԻՐՕ
(Ամբրիբրի Ֆրան. Առեւտ. Սենեկէ)

ՆՈՐ ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (1)

ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՕ

ԿՈՐՍՈՒԱԾ՝ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՎՐԱՅ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՔՈՒԱՆԿԸ

Արեւը հեռաւոր հորիզոնին տակ կորսուած էր Խաղաղականի մշուշներուն մէջ. խոշոր սեւ ամպեր ուժգնապէս փչող հովէն մղուելով կ'գլորէին երկինքին մէջ։

Սեփ սեւ գիշեր մը, անլուսին գիշերներուն պէս թաղծագին, կամաց կամաց իր սաւանի հսկայ քօղը տարածած էր անհուն հեղուկ դաշտին վրայ որ Նոր—Քալէտոնիոյ ծովեզերքները կ'թրջէ, և ծովային հետեւակազօրաց փողերը Նու Կզզիին պատժանոցին հանգիստի ժամը հնչած էին։

Առաջին կարգի զօրանաւ մը, Վէժէլանթը որ նաւահանգիստին բացը կեցած էր, առաջակայմին և խելակայմին վրայի սովորական լոյսերը վառած որոնք ոսկի գունդերու պէս կ'փայլէին երկինքին մութ կապոյտին մէջ, և նաւուն քիթին կողմի հսկող նաւաստին որոշ միջոցներու մէջ ծովային պահակներու սովորական բանաձեւը կ'պոռար։

Այդ աղաղակը մինչեւ ցամաք կ'հասնէր արձագանգի մը պէս, ալիքներուն վէտվէտումովը մինչեւ հոն նետուած, և կզզին շրջապատող խարակներուն վրայ կ'փշրուէր զինքը տանող ալիքներուն հետ։ Իրիկուան դէմ միայն քիչ մը հով եղած ըլլալով, ծովը դեռ նոր սկսած էր աւրուիլ, բայց փոթորիկը նախատեսելով, մարտանաւը շոգիի վրայ էր և պատրաստ բացը ելլալու վտանգի առաջին նշանին իսկ։ Երբեմն երբեմն ելեքտրական լոյսի ճառագայթ մը կզզիին խորշերը և խարակները կ'քննէր, ինչպէս նաեւ ծովեզերքի թմբուտները որոնք նորգիլակենիներէ, արմաւենիներէ և թամանուներէ կազմուած էին. կարծես թէ հոն գտնուող բանտարկեալներուն փախչելէն կ'վախցուէր։

Տարի մը առաջ այդ կզզին բերած էին չորս Զինացիներ որոնք խորհրդաւոր և տարօրինակ սովորութիւններ ունէին, և որոնց շուրջը շուտով կարգ մը առասպելներ էին կազմուած, բայց այդ երեւակայական պատմութիւններէն ոչ մէկը ճշմարտութեան չէր մօտեցած։

Պէտք է ըսենք թէ շատ տարօրինակ էր այդ Զինացիներուն պարագան։ Նոր Քալէտոնիոյ մէջ ո՛չ ոք, ո՛չ պատժանոցին տնօրէնը, ոչ վարչութեան պաշտօնեաները և ոչ ալ կզզիին կառավարիչը անոնց տարագրութեան իրական պատճառը չէին գիտեր։

Օրին մէկը անոնք կզզին հանած էին սովորական դատապարտեալներու խումբի մը հետ, և թիարանին գրասենեակէն զարմացումով տեսած էին որ անոնց թուղթերուն մէջ ո և է տեղեկութիւն չկար իրենց կրած պատիժին պատճառներուն կամ տեւողութեան վրայ։ Միակ իրենց անունները գրուած էին, կամ այն անունները զորս իրենք իրենց առած էին, Ֆհօ՛, Բիանկ, Լիու, Զանկ։ Ու այդ անուններուն դիմացը հետեւեալ ծանօթութիւնը գրուած էր.

«Այս տարագրեալները պէտք է խիստ հսկողութեան մը ենթարկուին որպէսզի չկարենան փախչիլ։ Եթէ ուզեն խոստովանութիւններ ընել, պէտք է Նումէայի մէջ ընդհանուր դատախազի պաշտօնը կատարող պաշտօնեային քով տարուին, որ անոնց յայտարարութիւնները պիտի ընդունի իր ստացած մասնաւոր հրահանգներուն համեմատ։ Արդէն բոլորովին այդ դատաւորին իշխանութեան տակ դրուած են անոնք, որու հրամաններուն համեմատ պէտք է շարժիլ, և որ իրաւունքը ունի նոյնիսկ զանոնք ազատ արձակելու իր պատասխանատուութեան տակ։

Բարձրագոյն որոշմամբ արտօնուած է իրենց ազգային սովորութեան համեմատ մազերնին կրել, ինչպէս նաեւ հագուստնին և բոլոր այն բաները որոնք իրենց վրայ պիտի ըլլան հոս հասած ատեննին։

Պէտք է խստութեամբ հսկել մինչեւ ցնոր անօրինութիւն, որ չկարենան իրարու հետ հաղորդակցիլ։»

Այս ծանօթագրութիւնը որ Ծովային և Դատական նախարարութիւններէն միեւնոյն ատեն կնքուած էր, այնքան հակառակ էր մինչեւ օրս նուիրագործուած սովորութեանց որ թիարանին բոլոր գրագիրներն ու քարտուղարներն յայտարարեցին որ օրէնքն այսպիսի հարուած մը չէր կրած երբեք, և ութ օր ամբողջ իրարու բացատրական ծանօթութիւններ, դիտողութիւններ, հրամաններ և հարցումներ ընելէ զատ ուրիշ բանով չզբաղեցան բնաւ կզզիին արդարութեան և կառավարական շրջանակներուն մէջ։ Վերջապէս, խնդիրը կ'սպառնար հետզհետէ կարեւոր հանգամանք մը ստանալ, երբ յաջորդ թղթաբերով եկած պաշտօնական հրաման մը կարճ կապեց զայն. այդ թուղթով կ'հրամայուէր չորս չինացիները կզզիին ընդհանուր դատախազին միակ և բացարձակ իրաւասութեան տակ դնել։

Պէտք եղաւ հնազանդիլ, բայց բոլոր պաշտօնեաներուն ալ հետաքրքրութիւնն այնքան մեծցած էր և իւրաքանչիւրին երեւակայութիւնն այնքան բորբոքած՝ որ ամէնէն յիմար պատմութիւններ և խելքէ մաքէ դուրս առասպելներ սկսան շրջիլ անոնց մասին կզզիին մէջ։ Ընդհանուր դատախազը անհագին գաղտնի պահարան մը ստացած էր որ ամենակատարեալ տեղեկութիւններ կ'պարունակէր այս գործին վրայ, բայց անիկա՝ ալ համր մնացած էր, և ամէն անգամ որ իրեն բան մը հարցնէին այս նիւթին վրայ՝ կ'պատասխանէր որ բառ մը իսկ ներելի չէր իրեն ըսել։ Ընդհանուր կառավարիչը ինքն իսկ իր փորձերուն մէջ չէր յաջողած և նոյն իսկ այդ պատճառաւ երկու բարձր պաշտօնատարներուն մէջ պզտիկ ցրտութիւն մը յառաջ էր եկած և կամաց կամաց սկսած էին իրենց պաշտօնական յարաբերութիւններէն դուրս ա՛լ իրար չտեսնալ։ Քանի մը երկար ամիսներ ենթադրութիւնները շարունակեցին շրջիլ ամէնուն բերանը և կարելի է ըսել որ պաշտօնեաները, ինչպէս նաեւ գաղթականները ակումբին մէջ իրար գտածնուն պէս ուրիշ բանի վրայ չխօսեցան բնաւ։ Ոմանք կ'պատմէին թէ այդ բանտարկեալները մեծ յանցաւորներ էին. ուրիշներ, գիտել տալով այդ ենթադրութեան անհաւանականութիւնը, քանի որ Ֆրանսացի չէին անոնք, կ'ըսէին թէ անհելի ոճիր մը գործած էին զոր կարելի չէր երեւան հանել ամենակարեւոր պատճառներով։ Ասոր ալ սակայն թիարանի սովորութեանց տեղեակ պաշտօնեաները իրաւամբ կ'պատասխանէին որ եթէ այդ անձերը իրաւ այդքան ծանր ոճիր մը գործած ըլլային, իրենց ընկերացող տեղեկագիրը խստութեան և միեւնոյն ատեն ալ մեղմութեան այդ տարօրինակ խառնուածքը չպիտի ունենար. արդարեւ թէեւ ամենախիստ հսկողութիւն մը յանձնարարուած էր ընել անոնց վրայ, որպէսզի չփախչին և իրարու հետ ալ չհաղորդակցին, միւս կողմէ սակայն ո՛չ թիապարտի հագուստ հագցուցած էին անոնց, ոչ շղթայ կապած, ոչ ալ թիարանի ծանր աշխատութիւններուն ենթարկած։

Նոյն իսկ արտօնուած էին՝ իրենց երկրին սովորութեան համեմատ մազերնին հիւսած թողուլ և գոհարներ կրել, և ինչ որ ալ աւելի կ'ապացուցանէր թէ սովորական չարագործներ չէին իրենք՝ սա էր որ անոնցմէ մէկը, որուն անունը Ֆհօ էր, մատանեմատին վրայ ոսկիէ հաստ մատանի մ'էր անցուցած որու վրայ առ նուազն վեց հազար տարանիական դահեկան արժող ադամանդ մը կար։ Բանտարկեալի մը մատին վրայ երեսուն հազար ֆրանքի գումար մը գտնուիլն ինքնին արդէն հազուագիւտ բան մըն էր, բայց այդ գոհարը վրան կրելու արտօնութիւնն ա՛լ աւելի զարմանալի էր, և գանէ աներեւակայելի ոճիրի մը գաղափարը կ'հեռացնէր։

Աւելի հաւանական էր որ Հիւէի մէջ (Աննամի մայրաքաղաքը) Ֆրանսացի մը կեանքին դէմ լարուած ոճրագործութեան մասնակցած էին, եղեռնագործութեան մը՝ որու անմիջական հետեւանքն եղաւ տեղւոյն բնիկ ցեղապետին և իր առաջին պաշտօնատարին փախուստը։ Այս կարծիքը պաշտպանողները կ'յաւելուին թէ Զինացիք Նու կզզիին մէջ իւրաքանչիւրը մէյմէկ տնակ ունէին ուր բաղդատաբար ազատ կեանք մը կ'անցնէին, իրենց քով առած ըլլալով կզզիին զինուորական դատապարտեալներէն մէյմէկ հատ, բայց անոնցմէ որոնք պատուի դէմ յանցանք մը չէին գործած։ Վերջապէս իբր գերագոյն փաստ կ'ըսէին թէ եթէ ոճիր մը գործած ըլլային այդ Զինացիները՝ մինչ կզզիին ընդհանուր դատախազին իրաւունք պիտի տրուէ՞ր ուզած ատենը զանոնք ազատ արձակելու։ Այդ իրաւունքը անշուշտ որոշ պայմաններով միայն պիտի գործադրուէր, պայմաններ զորս կզզիին պաշտօնական շրջանակներուն մէջ իսկ չէին գիտեր, և ամէն մարդ կ'հասկնար որ ճիշդ հոդ էր խնդրին գաղտնիքը։ Բայց սովորական դատապարտեալներ երբեք չպիտի կրնային այդ տեսակ իրաւունք մը ունենալ։

Ինչպէս որ միշտ կ'պատահի երկար տեւող վիճաբանութեանց մէջ, ամէն մարդ իր կարծիքը կ'պահէր և հետեւեալ օրը զայն դարձեալ առաջ կ'քշէր նոր պատճառաբանութիւններով։

Բան մը կար որ շատ նպաստած էր հանրային հետաքրքրութեան մեծնալուն այս խորհրդաւոր գործին մասին. ընդհանուր դատախազին կողմէ կզզւոյն կառավարիչին հաղորդուած մէկ քանի պաշտօնական հեռագիրներէն ժողովուրդին մէջ սա լուրը տարածուած էր որ այդ կզզին փոխադրուած ատեննին չորս Զինացիները բացարձակապէս յայտարարած էին որ տարին չլրացած անպատճառ պիտի փախչէին անկէ, և թէ ատոր համար իսկ պէտք էր վրանին խստութեամբ հսկել։ Իրաւ էր որ մինչեւ այդ օրը իրենց վարմունքը այդ խօսքերուն իրաւունք տուած չէր, որովհետեւ փախուստի ոչ մէկ փորձ կրցած էին հաստատել իրենց մասին։ Սակայն իրենց բանտարկութեան առաջին տարին կ'լրանար ճիշդ այն իրիկուն՝ որ Վէժէլանթը իր ելեքտրական լոյսերով Նու կզզիին ծովեզերքները կ'քննէր, և բնակիչներն ալ, որոնց հետաքրքրութիւնը գերազանցապէս գրգռուած էր, տենդոտ անհամբերութեամբ մը կ'սպասէին թէ եթէ իրաւ բանտարկեալները այդ երդումը ըրած էին՝ ի՛նչպէս պիտի ընէին իրենց վրայ դրուած հսկողութենէն խուսափելու համար։

(Շար.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՑՈՐԵՆ.— Այսօր հասաւ 28 վակոն Անատօլուէ և Ռումելիէ։ Գիներն են.— Անատօլու ապխտակ ցորեն էքսթրա 39—39½ փր. օխան։ A 38—38½, B 37½—38. խառն 32—35. Կարծր 36—37½. Էքսթրա 39—40. Կակուղ Ռումելի 37½—38½. Կարծր 37—37½. Կակուղ Ռումանիա 39—40։

ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ

ԱՅՍՕՐ ՍԿՍԱՆՔ մեր նոր թերթօնը, ԿՈՐՍՈՒԱԾ՝ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՎՐԱՅ, որ առաջին էջէն մինչև վերջին էջը պարունակած անհամար հետաքրքրաշարժ եւ արամադրիչ դրուագներով վստահ ենք թէ հաճելի ժամանց մը պիտի պարգեւէ ամեն կարգի ընթերցողներու։ Տարաշխարհիկ երկիրներ ճամբորդութիւններու գեղեցիկ շարք մ'է առիկա, ուր ի յայտ կուգան մինչև նորանոր գիւտեր, եւ ա՛լ աւելի վառ կ'պահեն ընթերցողին հետաքրքրութիւնը։

ՔՐՈՆԻԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ռուտեր Տփղիսէն կ'ծանուցանէ Օգոստոս 18 թուակիր Լոնտոնի թերթերուն թէ Կովկասի Փոխարքան աւետեց Ամենայն Հայոց Ս. Հայրապետին թէ Զարն ընդունած է իր խնդիրքը, եւ հրամանագրով մը Հայ Եկեղեցիին վերադարձուցած է գրաւեալ գոյքերն ու կալուածներն եւ Հայ դպրոցները։—Նոյն Գործակալութիւնը Կ. Պոլսէն ալ կ'հեռագրէ թէ Զարին Ուքազն իրաց նախկին վիճակը կ'վերահաստատէ ի մասին Հայ դպրոցներու և Հայ Եկեղեցւոյ կալուածներուն ու գոյքերուն մատակարարութեան, և թէ Ամենայն Հայոց Ս. Հայրապետին մատուցած խնդիրքին այս կերպ ընդունելութեան արժանանալը ջերմ գոհունակութիւն պատճառած է Հայերուն։

—Երէկ գրեցինք թէ Ս. Պատրիարք Հայրն այցելութիւն տուաւ ռուսական դեսպան Մ. Զինովևվի։ Ն. Սրբազնութիւնը շնորհակալութիւն յայտներ է եկեղեցապատկան կալուածներուն և դպրոցներուն վերադարձման առթիւ։

—Պոլիս գտնուող եպիսկոպոսները, իբրեւ միաբան Ս. Էջմիածնի, պատկանեալ իշխանութեան միջոցաւ շնորհակալութեան գիր մը պիտի ուղղեն Վեհ. Զարին, Ռուսահայ եկեղեցապատկան կալուածներուն և դպրոցներուն վերադարձման առթիւ։

—Ադրիանուպոլսոյ առաջն. տեղապահ Տ. Արսէն Ա. քհն. Իւրձակեան Կ. Պոլիս եկած է խնդրելու համար Ս. Պատրիարքէն, որպէս զի նորընտիր Առաջնորդ Տ. Դանիէլ Ծ. Վրդ. Ցակոբեան յորդորուի Էտիրնէի Առաջնորդութիւնն ընդունելու՝ փոխանակ Երուսաղէմի վանքին Ժառանգաւորաց վարժարանի տեսչութեան, առ որ կոչուած է Տ. Ցարութիւն Ս. Պատրիարք Հօր կողմէ, և զոր ինք կ'նախընտրէ իր պատկանած միաբանութեան Ա. ման. պետին հնազանդելու համար։

—Էտիրնէի Առաջնորդական Տեղապահ Տ. Արսէն Ա. քհնյ. Իւրձակեան, տեղւոյն Կրօնական և Քաղաքական ժողովներուն ստորագրութեամբ շնորհակալութեան գիր մը յանձնած է Ս. Պատրիարք Հօր, Ռուսահայ եկեղեցապատկան և դպրոցական կալուածներուն վերադարձման առթիւ տարած ջանքերուն համար։

—Պրէճիկի կառավարիչը Ս. Պատրիարք Հօր ուղղած գրով մը գոհունակութիւն կ'յայտնէ Տ. Մովսէս Եպսկ. Կէօմիւշքեանի 13 տարուան պաշտօնավարութեան համար։

—Էսկիշէհիրի Թաղ. Խորհուրդը գոհունակութեան գիր մը ղրկած է Պատրիարքարան, Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Այվազեանի բարւոք պաշտօնավարութեան համար։

—Երուսաղէմէ կ'գրեն մեզ.—Ժառանգաւորաց վարժարանի տարեկան հարցաքննութիւնք աւարտեցան, ինչպէս գրած էինք, Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ. բարեբախտաբար այս տարի աւելի յաջողակ գտնուեցան աշակերտք։ Թովմաս Էֆ. Աճէմեանի գործունեայ պաշտօնավարութիւնն ու կարողութիւնը գրաւական մը կրնան ըլլալ, յառաջիկայ շրջանին մէջ, մեզ ցոյց տալու աւելի գոհացուցիչ արդիւնք մը. սակայն մեր ակնկալած այս գոհացուցիչ արդիւնքը տեսնել կարենալու համար, բաւ չեն Աճէմեան էֆենտիի հմտութիւնը և մասնագիտութիւնը, եթէ վանական վարչութիւնն ի նկատ չառնէ վարժարանին հին ծրագրին բարեփոխումը. ուստի յուսանք որ արդի վարչութիւնը ժառ. վարժարանին կատարեալ հոգածութիւն պիտի տանի առանց պատճառաբանութիւններ մէջ բերելու, ինչպէս մինչև այժմ միշտ եղած է, պատասխանելով վարժարանին յառաջդիմութիւնը փափաքողներուն թէ «վանքին կանոնագիրն ասկէ աւելին ընել չի ներեր», «մեզի տիրացու պէտք է քան ուսեալ միաբաններ» ու այլ նպաստակուր առարկութիւններ։

—Կիրասոնէն կ'գրեն մեզ.—«Երկսեռ նախակրթարանները վերջացած շրջանին բաւական գոհացուցիչ ընթացք մը բոլորեցին։ Քանի մը տարիներէ ի վեր դիզուած 300 ոսկիի պարտքը մաս առ մաս վճարելու դիտաւորութեամբ 250 ոսկիի ծախք մը մ'այն ունենալ որոշուած էր, այնպէս՝ ալ եղաւ, և թէև Անաթոլիա Քոլէճի շրջանաւարտներէն Պր. Ն. Զօրեան անձնուիրաբար մէկ տարի պաշտօն վարեց, սակայն պարտքէն ալ կարեւոր մաս մը վճարել կարելի չեղաւ, հակառակ առ այդ եղած ջանքերու և ի գործ դրուած ամէն կարելի խնայութեան։ Այսօր պարտքը դարձեալ 300 ոսկի է, թէև փոխարէն 50—60 ոսկիի չափ պահանջ ցոյց կ'տրուի զանազաններէ, առմակի միացողներ, ևն.։ 250 ոսկիի 140 ոսկին թոշակներէ գանձուած է եւ միացեալն եկեղեցիէն և հասոյթներէ յատկացուած է։ Հիմա կ'խորհուի որ պարտքին յատկացուի ամէն կալուածական և եկեղեցական հասոյթ, որով երեք տարիէն կրնայ պարտքը գոցուիլ։ Իսկ մինչև երեք տարի վարժարանները կառավարել սոսկ դպրոցական թոշակներէ գոյանալիք հասոյթով։

—Վենետիկի Մխիթարեաններէն Հ. Եսայի Տոյեկցի և Տ. Սահակ Տ. Մովսէսեան վարդապետներն երէկ Ազգ. Պատրիարքարան այցելեցին։

ԱԶԴ

ՌՈՍՏՈՄԴՈՅԻ Ս. ԹԱԴԷՈՍԻ ՈՒԽՏԱՒՈՐԱՑ

Ի գլխաւորութեան Կենաց Փայտի Ս. Բեւեռին ուխտաւորաց կ'յայտնեմք թէ Կայսերական Կառավարութեան շնորհիւ հանգիստ եւ երթևեկելի միջոցները ձեռք առնուած են եւ բարեպաշտ ուխտաւորները կրնան անյապաղ իրենց հոգեւոր մխիթարութեան համար դիմել Ռոստոմդոյի Ս. Թադէոսի վանքը։

Ի դիմաց Թ. Խորհրդոյ Ս. Թադէոսի

Ատենադպիր Ատենապետ

Ցովհ. Գ. Փափազեան Ռուբէն Փափազեան

6 Օգոս. 905, Ռոստոմդո 4—1

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐԵՐ

ՆԱՑԻՕՆԱԼԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱՆՆՊԱՍՏ ԼՈՒՐԵՐ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԷՆ

ՊՈՐՏՍՄՈՒԹ, Օգոստ. 21 (Պաշտօնական).—Ճափոնցի լիազօր պատուիրակ Պարոն Քոմուրա, Մ. Վիդդէի առաջարկեց որ Ռուսիա Ճափոնի թողու Սախալինի կղզին, և եթէ պատերազմական տուգանք վճարէ, Ճափոն կղզիին կէսը ետ տայ Ռուսիոյ։ Մ. Վիդդէ պայմանաժամ խնդրեց մտածելու համար։

ՊՈՐՏՍՄՈՒԹ, 21.— Մր. Ռուզվէլդ խնդրեց Ճափոնցի և Ռուս պատուիրակներէն որ Իրաւարար Ատեանի մը քննութեան յանձնեն այն յօդուածները, որոնց մասին կարելի չէ եղած համաձայնութիւն գոյացնել։

ԼՈՆՏՈՆ, 21.—Պորդսմութէ կ'հեռագրուի Էտ-ըինճ Թելէկրաֆի թէ Մր. Ռուզվէլդ ինքզինք առաջարկեց իբր իրաւարար՝ Ռուսիոյ և Ճափոնի միջեւ ծագած դժուարութիւնները լուծելու։ — Սէնթըր Նիւզի Մանչուրեան Թղթակիցը կ'հեռագրէ թէ ճափոնական բանակը վերջերս անհաղապէս զօրացաւ, և արդէն սկսաւ պաշարողական շարժում ի գործ դնելու ռուս բանակին դէմ։

ՊՈՐՏՍՄՈՒԹ, 22.—Նախագահ Մր. Ռուզվէլդի և Պարոն Ռօզէնի տեսակցութիւնն հինգ ժամ տեւեց։ Պարոն Ռօզէն Նախագահին քովէն մեկնելէ վերջ ուրախ կ'երեւէր։ Նախագահն առաջարկեց ռուս պատուիրակին որ միջնորդային Իրաւարար Ատեանի մը քննութեան յանձնուին այն յօդուածները, որոնց մասին անհամաձայնութիւն ծագած է պատուիրակներուն միջեւ։ Նախագահն հաւաստեց Պարոն Ռօզէնին թէ ինք իր անձնական նախաձեռնութեամբ կ'ընէ այս առաջարկը, բայց Անգլիա, Գերմանիա եւ Ֆրանսա համամիտ են իրեն, զի ամբողջ աշխարհի շահը կ'պահանջէ որ հաշտութիւն կնքուի։— Ճափոնցի պատուիրակները հեռագիր մը ղրկեցին Թօքիօ, ռուս պատուիրակներուն պահանջած բարեփոխումները պարզելով։ Մ. Վիդդէ տեսակցութեան մը մէջ շնորհակալութեամբ խօսեցաւ Մր. Ռուզվէլդի ջանքերուն համար, բայց, ըսաւ, Սախալինի եւ պատերազմական տուգանքի խնդիրներուն համար այնքան մեծ է անհամաձայնութիւնը ռուս և ճափոնցի պատուիրակներուն միջև, որ անկարելի է համաձայնութիւն գոյացնել։ Ճափոնի պայմաններն անպատուաբեր են Ռուսիոյ համար։ Ճափոնցի բարձրաստիճան անձնաւորութիւն մը յայտարարեց թէ Ճափոնցի պատուիրակները պիտի չփոփոխեն իրենց պայմանները. հետեւաբար, հաւանաբար կ'երեւի որ բանակցութիւնք պիտի խզուին և պատերազմը պիտի շարունակուի։ — Կ'ըսուի թէ ռուս պատուիրակներն իրենց ստացած մէկ նոր հրահանգին համեմատ, պիտի յայտարարեն վաղուան ժողովին մէջ թէ Ռուսիա կը հաւանի Սախալինը թողուլ Ճափոնի, բայց բացարձակապէս կ'մերժէ պատերազմական տուգանք վճարել։ Եթէ այս զրոյցը ճշմարիտ է, հաւանական է որ հաշտութիւն կնքուի, զի այս երկու խնդիրներուն մէջ կ'կայանայ պատուիրակներուն անհամաձայնութիւնը։

ՊՈՐՏՍՄՈՒԹ, 21.— Պատուիրակները վաղուան ժողովին մէջ պիտի քննեն այն չորս յօդուածները, որոնց մասին անհամաձայնութիւն կ'տիրէ, և ամէն ջանք պիտի թափեն որ ելք ճամբայ մը գտնեն. ամէն պարագայի մէջ, սակայն, վիճաբանութիւնք մէկ քանի օր պիտի տեւեն դեռ։ Հաշտութեան ժողովն այս շաբաթ պիտի փակէ իր նիստերը, եւ պատուիրակներն իրենց տեղերը պիտի դառնան. եթէ համաձայնութիւն գոյանայ, հաշտութեան նախնական պայմանագիրը պիտի կնքուի, ապա թէ ոչ՝ պատերազմը պիտի շարունակուի։ Ուաշինկդընի պաշտօնական շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ այս շաբաթը Մ. Արեւելքի պատերազմին ամէնէն կարեւոր մէկ շրջանը պիտի կազմէ, զի այս օրերս պիտի որոշուի թէ պատերազմը պիտի շարունակուի՞ թէ ոչ։

ՓԱՐԻԶ, 21.—Վարչապետ Մ. Ռուվիէ յանձնարարեց որ իրաւարար Ատեանի մը յանձնուի Սախալինի և պատերազմի տուգանքի խնդրոյ քննութիւնը։ Ճափոնցիք չեն ուզեր փոփոխել իրենց պայմանները, ուստի շատ հաւանական կ'նկատուի որ բանակցութիւնք խզուին։ Պերլինէ կը հեռագրուի թէ ամէնէն լաւատես անձնաւորութիւններն անգամ իրենց յոյսը կորսուցին. անյուսալի է որ Մր. Ռուզվէլդի միջնորդութիւնն օգուտ մ'ունենայ։ Լոնտոնէ կ'հեռագրուի թէ պատերազմիկ երկու տէրութիւնք ևս համոզուած են որ բանակցութիւնք պիտի խզուին։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 22.— Դիւանագիտական շրջանակներու մէջ անհամբերութեամբ կ'սպասուի Զարին և Մ. Վիդդէի միջեւ վերջերս փոխանակուած հեռագիրներուն հրատարակման, ուրկէ վճռապէս պիտի տեսնուի թէ Ռուսիա խաղաղութեան կը բաղձայ։

ԹՕՔԻՕ, 21.— Պորդսմութ գտնուող ճափոնցի թղթակիցները կ'հեռագրեն շարունակ թէ յոյս ունին որ հաշտութիւն կնքուի։

ՓԱՐԻԶ, 21.— Ելմտական շրջանակներու մէջ գայթակղալից մեծ դէպք մ'երեւան ելաւ։ Բնդուստրիէլ Նասիօնալ տ'Էսգոնդ դրամատան աւագ հաշուակալ Կրաւալ, որ հանրածանօթ է իր վարած աշխարհիկ կեանքով, ամբաստանուեցաւ թէ 1895էն ի վեր միլիոնաւոր ֆրանքներ խառնած և մսխած է կլուպներիկ կանանց համար։ Այս յայտնութիւնն մեծ յուզում պատճառեց։

ՀՌՈՄ, 21.—Մարկարիթա Մայր թագուհին Սէն Պէրնար լերան մօտ ինքնաշարժ կառքի վտանգ մ'անցուց և բաւական ծանրապէս վիրաւորուեցաւ։

ՀՐԱԺԱՐՈՒՄ ԼՈՐՏ ՔԸՐԶԸՆԻ

ԼՈՆՏՈՆ, Օգոս. 20 (Պաշտօնական).— Հնդկաստանի Փոխարքայ Լորտ Քըրզըն հրաժարեցաւ, զի անգլիական Դահլիճը մերժեց իր մէկ առաջարկը թէ Զօր. Պէրոու անդամ կարգուի Հնդկաստանի զինուորական խորհուրդին։ Քանատայի Ըրլ. Կառավարիչ Լորտ Մինդօ փոխարքայ կարգուեցաւ Հնդկաստանի։

«Կ. ՊՈԼՍՈՅ» ԵՒ «ՖՈՒՌՆԻԷԼ»

ԹՕՔԻՕ, Օգոստ. 20.— Այս առտու Նախարարաց ժողովն երկարատեւ նիստ մը գումարեց նախագահութեամբ Վարչապետ Կոմս Քացուրայի որ ապա տեսակցեցաւ անգլիական դեսպանին հետ։ — Քամչաթքա ղրկուած ճափոնական նաւատորմին հրամանատարը կ'տեղեկագրէ թէ Բեդրոպավլովսք նաւահանգստին մէջ գերի բռնեց Օտբ-լէ ռուս փոխադրանաւը։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 20.— Կծծիատունէ լուր կ'տրուի Պետերսպուրկի հեռագրական Գործակալութեան թէ Սախալինէ հասած երեք սպաներ ըսին որ ռուս ջոկատ մը թիապարտներու օգնութեամբ կղզւոյն ներքին մասին մէջ դժուարամերձենալի կէտ մը ամրացած է։ Զօր. Լինիեւիչ կ'հեռագրէ Զարին թէ Հայլունկչէնի մէջ ռուս զօրքերը բնաջինջ ըրին հօնհուզ աւազակախումբ մը. սպանեալներուն մէջ կ'գտնուէին աւազակապետն և երկու ճափոնցիներ։

ԷՍՊԸՐ (Եութլանտ) 21.— Պալթիկ գացող Անգլիական նաւատորմին որ կը բաղկանայ 10 զրահաւորներէ, 7 յածանաւէ, և թորփիլլահալածներէ, երէկ հոս հասաւ. վաղը հոս կ'սպասուի 23 թորփիլանաւեր որ պիտի միանան նոյն նաւատորմին։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

(ԼՈՒՐԵՐ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐՈՎ. ՕԳՈՍՏՈՍ 20.)

ԴԷՊ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Թէպէտև Պորդսմութի հաշտութեան ժողովն ուրբաթ օր Ռուսիոյ հիւսիսային ծովեզերքին վրայ Ճափոնի ձկնորսութեան իրաւունք տալու խնդիրը (յօդուած ԺԲ.) վիճաբանութեան ենթարկել եաք, յաջորդ նիստն առաջիկայ Դշ. օրուան (այսօրուան) յետաձգուեցաւ և ռուս պատուիրակներն յայտարարեցին թէ իրենց արուած իշխանութեան վերջին սահմանին հասած են, բայց Մ. Սադօ և իր հետ բովանդակ Ճափոն շատ մեծ վստահութեամբ կ'նային ապագային վրայ։ Արդարև ամէն պատճառ ունի մարդ մասնակցելու այդ վստահութեան։ Ամէն պարագայի մէջ բանակցութիւնք վերստին պիտի սկսին միևնոյն ոգևորութեամբ։ Թէև կացութիւնը կ'փոխուի ժամէ ի ժամ, թէեւ Ռուսաց կողմէ կ'ըսեն թէ Մ. Վիդդէ և իր ընկերները հաշտութեան ժողովին աշխատութիւնները վերջացած կ'նկատեն, վերջապէս թէեւ կ'ծանուցուի թէ Նիքոլա կայսրն հեռագրած է Լինիեւիչի ամէն պատահականութեանց առջև պատրաստ գտնուիլ, բայց այս ամէնուն համակարծիք դիւանագէտն անգամ կ'հաստատեն թէ վերջին վայրկեանին ամէն ինչ կարելի է բարեփոխել։ Չորս կէտ անլոյծ մնացին դեռ. Սախալինի խնդիրը, Ճափոնի պատերազմական ծախուց խնդիրը, չէզոք նաւահանգիստներու մէջ ապաստանած ռուս մարտանաւերուն խնդիրն և Խաղաղական ովկիանոսի մէջ ռուս ծովային ոյժերուն սահմանափակման խնդիրը։ Շատ հաւանական է որ այս չորս օրուան դադարին մէջ, հաշտութեան ժողովին նիստերուն ատենագրութիւնները պատրաստելով հանդերձ, լիազօրք այս խնդիրներուն պատկանող վէճերուն կարգադրութեամբ ալ զբաղին։

Այս մասին զանազան ենթադրութիւններ կան։ Անգլիա, Ֆրանսա և Ամերիկա գործի վրայ են, որպէս թէ զինակցութիւն մը կնքուած ըլլար իրենց մէջ, ոչ թէ պատերազմ, այլ հաշտութիւն ձեռք բերելու համար։ Մեծն Բրիտանիոյ դիւանագիտութիւնն ամէն ջանք ու ճիգ ի գործ կ'դնէ մեղմացնելու համար իր զինակից Ճափոնի խստութիւնը. Ֆրանսա միւս կողմէ Ռուսիոյ վրայ ազդեցութիւն բանեցնելու կ'ջանայ։ Իսկ Մր. Ռուզվէլդ երկու թշնամիներն իրաւախոհ ընելու նպատակ ունի։ Այս պատճառաւ է որ Մ. Վիդդէ ըսաւ թէ չի գիտեր թէ ինչ պիտի պատահի մինչև Դշ. բայց կարելի է որ «մէկ քանի տէրութիւնք» յաջողին նպաստաւոր ազդեցութիւն մը ի գործ դնել։ Տարակոյս չկայ որ Միքատոյի վստահելին և Ճափոնի ելմտական գործակատար Մ. Քանէքօ, այս նպատակաւ այցելեց Միացեալ Նահանգաց յորդելի Նախագահին յՕըսդէրպէ։ Այս այցելութեան կարևորութիւնը կ'աւելնայ անմիջապէս իրեն հետեւող այն լուրով թէ Մր. Ռուզվէլդ առ ինքն հրաւիրեց ռուս դեսպանն և բանակցութեան պատուիրակ պարոն Ռօզէնը, չափազանց մտերմական հանգամանք ունեցող հեռագիր մը ցուցնելու համար անոր։ Բնականաբար այս հեռագրին պարունակութեան մասին ոևէ ենթադրութիւն ընել կարելի չէ։ Բայց յուսալի է որ ոևէ եղանակով մը Ռուսիոյ, եղած նոր մէկ զիջումը կը պարունակէ. զի անուրանալի իրողութիւն մ'է թէ Արևու յաղթական զաւակները նպատակ չունին հաշտութեան պայմաններ տուն տալ Ռուսիոյ, այլ ընդհակառակն, աշխատիլ Ռուսիոյ հետ հաշտութիւն ձեռք բերելու համար։ Այս մտքով պէտք է ըմբռնել այն լուր թէ ճափոնցի լիազօրք հեռագիր մը ղրկեցին ի Թօքիօ, զիջողութիւն մ'ընելու համար Ռուսաց։ Միւս կողմէ Ռուսերն ալ արամադիր են մեղմաբար գործել և խօսիլ։ Մ. Վիդդէ և իր ընկերները քանի որ հաւանեցան վճարել ռուս գերիներուն սնունդին, փոխադրութեան և բնակութեան ծախքերը, ուրեմն մէկդի թողուցին իրենց երբեմնի այն պնդումը թէ Ռուսիա կոպէկ մ'իսկ չպիտի վճարէ Ճափոնի։ Ռուս լիազօրք կ'ճանչնան ռուս վիրաւորեալներուն դարմանումին համար Ճափոնի ըրած ծախքերը։ Կ'յայտարարեն թէ պատրաստ են վճարել նաև ռուս գերիներուն բնակութեան համար Ճափոնի կառուցած շէնքերուն ծախքերը։ Ըսուեցաւ նաև թէ Ռուսիա պատրաստ է թողուլ Սախալինը, պայմանաւ որ Ճափոն յանձն առնէ ամրութիւններ չընել կղզւոյն վրայ։

Արդարև Պետերսպուրկի մէջ որոշած ըլլալու են ամէն կերպով գոհացնել Ճափոնը։ Իրաւ է որ ռուս առաջին լիազօրին՝ Մ. Վիդդէի պէտք եղած իրաւասութիւնը տրուած է և նոր հրահանգի սպասելու պէտք չունի, բայց այս ըսել չէ թէ նոր հրաման մը չպիտի տրուի իրեն իր անյողդողդ ընթացքը մեղմացնելու կամ չափաւորելու։ Ռուսիա, մանաւանդ այս միջոցիս, զանձային նոր կարգադրութեանց համար չափազանց պէտք ունի խաղաղութեան։ Արդ, ամէն երևոյթները կ'ցուցնեն թէ Պորդսմութի բանակցութիւնք պիտի շարունակուին և Ամերիկայի Ատլանտեան եզերաց վրայ հաշտութիւնը պիտի պիտի կնքուի մօտերս։ Պէտք է գիտնալ որ ճափոնական պահանջմանց ամէն մէկ կէտին վրայ ո'րչափ մանրամասնօրէն տեղի ունենան բանակցութիւնք, այնչափ կ'նուազին բանակցութեանց խզուելուն հաւանականութեան պատճառները։

(Neue Freie Presse, Օգոս. 20, Կիր.)

ՄՐ. ՌՈՒԶՎԷԼԴԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ԼՈՆՏՈՆ, Օգոստ, 19.— Պարոն Ռօզէն այս առտու կանուխ Պորդսմութէն Օըսդըրպէ գնաց Մր. Ռուզվէլդի հրաւէրով։ Պորդսմութի մէջ կ'կարծեն թէ Մր. Ռուզվէլդ կատարեալ լաւատեսութեամբ կ'աշխատի ի նպաստ հաշտութեան և այժմ, քանի որ երկու կողմէն վէճի առարկայ եղող խնդիրները բաւական լուսաբանուեցան, ժամանակն հասած կ'համարի օգտակար կերպով ի գործ դնելու իր միջնորդութիւնը։ Տարակոյս չկայ թէ Թօքիոյէ և Պետերսպուրկէ վերջնական հրահանգներ ստանալու համար էր որ հաշտութեան ժողովին նիստը յետաձգուեցաւ։ Ամէն կողմէ կ'հաւատեն թէ Մր. Ռուզվէլդ Թօքիոյի և Պետերսպուրկի կառավարութիւններուն վրայ բարոյական ճնշում կ'բանեցնէ իրաւախոհ ըլլալու համար։ Մր. Ռուզվէլդի կողմէ Պարոն Ռօզէնի եղած հրաւէրն սարպաղական հանգամանք մ'ունէր։ Նախագահն հեռագրեց թէ շատ մտերմական լուր մը պիտի հաղորդէ իրեն։ Պարոն Քանէքօ, որ ինչպէս յայտնի է, ուղղակի յարաբերութիւն ունի Թօքիոյի կառավարութեան հետ, երեկ իրիկուն յանկնկալս այցելեց Մր. Ռուզվէլդի. յայտնի չէ թէ Պարոն Քանէքօ Միքատոյին կողմէ յատուկ պաշտօնո՞վ մը այցելեց Նախագահին թէ ոչ. 3 ժամէն Նիւ Եորք դարձաւ։ Ապա Մր. Բայրս կէս գիշերին սարպաղական հեռագիր մ'առաւ Ուէնդսուրթ Օթէլին մէջ և անմիջապէս երկար հեռագրով մը տեղեկութիւններ տուաւ Նախագահին։ Ապա հեռագրին գլուխն անցնելով կէս ժամու չափ բանակցեցաւ Մր. Ռուզվէլդի հետ։ Ապահովաբար, գիշերային այս բանակցութեանց հետեւանքով էր որ Մր. Ռուզվէլդ հեռագրով հրաւիրեց Պարոն Ռօզէնն այցելել իրեն։

ՕՍՏԸՐՊԷ, Օգոստ. 19.—«Ռուս պատուիրակներն այս իրիկուան կամ վաղն առտու Պորդսմութէ հոս պիտի գան Նախագահին հրաւէրով, տեսնուելու համար իրեն հետ։ Մ. Ռուզվէլդ երէկ իրիկուն Պարոն Քանէքօյի հետ ունեցած մէկ տեսակցութեան հետեւանքով էր որ հրաւիրեց ռուս պատուիրակները։ Թէպէտ ճշտիւ յայտնի չեն այս տեսակցութեան մանրամասնութիւնք, բայց կ'հաւատեն թէ Նախագահ Ռուզվէլդ կ'աշխատի թէ Ճափոնի և թէ Ռուսիոյ համար պատուաբեր իրաւախոհութիւն մը ձեռք բերելու, ամուլ չթողլու համար հաշտութեան բանակցութիւնները։

ՊՈՐՏՍՄՈՒԹ, Օգոստ. 19.—Պարոն Ռօզէն, Մ. Քուասդօվի հետ Օըսդըրպէ գնաց, քիչ ետք Մ. Վիդդէ ալ հոն գնաց։ Երեկոյին Նախագահին հետ պիտի ճաշեն։ Վստահաբար լուր կուտան թէ Նախագահ Ռուզվէլդ Պետերսպուրկի և Թօքիոյի կառավարութիւններէն խնդրեց որ հաշտասիրութեամբ վարուին և պատճառ չըլլան բանակցութեանց խզուելուն։ Կ'հաւատեն թէ Սախալինի յանձնումն որոշուած խնդիր մ'է։ Միւս կողմէ, կ'կարծեն որ եթէ Ճափոն չհրաժարի պատերազմական տուգանքի պահանջումէն, կարելի չպիտի ըլլայ համաձայնիլ։ Այս խնդրոյն վերջնական խօսքն ալ Թօքիոյէ կ'սպասուի։

Մ. ՎԻԴԴԷԻ ԽՕՍՔԵՐԸ

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, Օգոստ. 19.— Սլօվօ թերթը, Պորդսմութի թղթակցին՝ Մ. Վիդդէի հետ ունեցած մէկ տեսակցութիւնը կ'հրատարակէ Օգոստ. 17 թուով. «—Ուրեմն չէ՞ք յուսար որ հաշտութեան ժողովը գոհացուցիչ արդիւնք մ'ունենայ։ —Վիդդէ.—Ինչպէս ի սկզբան ըսած եմ, ես անձնապէս շատ քիչ յոյս ունիմ անոր վրայ։» Թղթակիցն հարցուց Մ. Վիդդէի թէ ինչո՞ւ համար չհերքեց լրագրաց այն հրատարակութիւնը թէ ինք իրաւասութիւն ունի ամենայն ազատութեամբ գործելու։ Մ. Վիդդէ պատասխանեց. «Բայց իմ լիազօր իշխանութիւնէս զատ հրահանգներ ալ ունիմ, որոյմէ չեմ կրնար շեղիլ։»

ՊԵՐԼԻՆ, Օգոստ. 19.—Լօգալ Անձայկէրի թղթակիցը կ'հեռագրէ Պերլինէ.— Մ. Վիդդէ որ մարմնով յոգնած, բայց զուարթ է, ըսաւ. «Ինչ կ'ուզէք որ ըսեմ ձեզ, կացութիւնը ջինջ ու յստակ է. ամեն ինչ պարզուեցաւ։ Պարոն Քոմուրա և ես դարանակալ կ'սպասենք իրարու հանդէպ։ Մինչև Դշ. յետ միջօրէին ժամ 3ին, այսինքն ժողովին ի նիստ գումարուած ատեն ինչ պատահելիքը չեմ կրնար գուշակել, թերևս մինչև այն ատեն մեծ տէրութիւնք իրենց ազդեցութիւնը, սա կամ նա կերպով յաջողին ի գործ դնել։

⁂ Ճափոնցի մը ըսաւ ինծ. «Մեք պատրաստ ենք զիջումներ ընելու, որք թէև աշխարհի համար անշուշտ, բայց մեր ազգին համար չափազանց մեծ պիտի երևին։ Այս զիջումները պիտի ընենք, եթէ տեսնենք որ Ռուսերն ալ նոյնն ընեն մեզ փոխադարձաբար։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՌԱԿ ՄԱՍԸ ՃԱՓՈՆԻ ՄԷՋ

ՊԵՐԼԻՆ, Օգոստ. 19.—Թօքիոյէ կ'հեռագրեն առ Լօգալ Անձայկէր. «Հաշտութեան Խնդրոյն Ընկերակցութիւնը» վերջին նիստին մէջ որոշեց հետեւեալ հեռագիրը ղրկել Քոմուրայի.

«Կ'կարծենք թէ հաշտութեան պայմանները շատ չափաւոր են, և պէտք եղած երաշխաւորութիւնը չեն ընծայեր տեւական խաղաղութեան մը համար։ Զինուորական գործողութիւն մ'ալ պէտք է որ համընթացաբար այժմ տայ պահանջումներուն։ Կ'ցանկանք որ բանակցութեանց ատեն զինադադար տեղի ունենայ, և այս, ի հեճուկս Ճափոնցւոց, բանակցութեանց ատեն խրոխտ ընթացք մը տեսան Ռուսերուն։ Ճափոնցիք մեծ կարեւորութիւն կ'ընծայեն Մայրագոյն Ասիոյ մէջ ռուս ծովային ոյժերուն սահմանափակման խնդրոյն։ Անշուշտ կառավարութիւնն որոշած է իրեն համար աւագ կարեւորութիւն մ'ունեցող այս պահանջման վրայ անյողդողդ մնալ, մինչև իսկ եթէ պատճառ ըլլայ պատերազմին երկարաձգման շարունակութեան։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, Օգոստ. 19.—Վաղը զինուորական բարձր ատեանը վերստին ի նիստ պիտի գումարուի Պէդէրհօֆի մէջ և նիստին պիտի մասնակցին ամէն մեծ դուքսերը։ Այս ժողովին մէջ է որ պիտի որոշուի բանակցութիւնները շարունակել կամ խզել։

ՃԱՓՈՆԻ ՆԱՒԱՏՈՐՄԸ

ԼՈՆՏՈՆ, Օգոստ. 11։ — Մեծ վստահութեամբ կ'հաւատեն թէ Ճափոնական նաւատորմը մօտերս պիտի այցելէ Անգլ. նաւահանգիստները։ Բայց այս այցելութիւն բնականաբար քաղաքական կացութենէն կախում ունի, այսինքն մինչև այն ատեն Ճափոնի և Ռուսիոյ միջեւ հաշտութիւն կնքուելէն։

(Neue Freie Presse, Օգոս. 20, Կիր.)

ՄԱՆԱՇԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Կ. ՊՈԼԻՍ, Օգոս. 10/23

ՏԵՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ

Օ. Ո. 100էն կանխիկ

Վաթեր Եուրգուլէ	Ն. 4 Բ.	33¼		ղրշ.
» Իզմիր	» »	34		»
» Սելանիկ	» »	34½		»

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ

Օ. Ո. 100էն 61 օր պայմանաժ. կամ Օ. Ո. 2% զեղչ կանխիկ

Վաթեր Ն.	20	49	ղրշ.
Էքսթրա »	16—24	60—61	»
» »	50		»

ԻՏԱԼԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ

Վաթեր Ն.	4—14	38—38½	ղրշ.
» »	20	48	»
Էքսթրա »	12—14	46	»
» »	16—24	52	»

ԶՈՒԻՑԵՐԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ

Կարմիր Վաթեր Ն. 20 68 ղրշ.

ԻՏԱԼԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ

Կարմիր Վաթեր Ն. 20 66 ղրշ.

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԲԱՄԲԱԿԻ

ՄԱՆՉԷՍԹԸՐ, Օգոս. 10/23

Սրօթ 5.85 քէնս

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԱՏԸՔԷՕՒՂ-ՄՕՏԱ

Կ'բացուի Սեպտեմբեր 5ին (ըստ Հին Տ.)։

Այս հաստատութեան նպատակն է ապահովել աշակերտներուն բարոյական և մտաւորական կրթութիւն մը՝ առհմային պահանջումներուն համաձայն։ Առ այս, բաց ի միաբաններէ՝ որոնք վարժարանի վարչական մարմինը կ'կազմեն, ունի մայրաքաղաքիս հայ և օտարազգի լաւագոյն ուսուցիչներու գործակցութիւնը, որոնցմով կ'կազմուի քսան հոգիէ բաղկացած ուսուցչական խումբ մը։

Կ'աւանդէ Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Անգլիերէն, Լատիներէն և Իտալերէն լեզուները, յատուկ վաճառականական դասընթացք և կրթարանական բոլոր ընթացիկ ուսումները, ինչպէս նաև գծագրութիւն, նկար, մարմնամարզ, ձայնական երաժշտութիւն, փողերգութիւն (fanfare) ևն։

Աչալուրջ և հայրական հսկողութիւն մը կ'տիրէ աշակերտաց բարոյականի և կրթութեան վրայ։ Վարժարանս իր ծովահայեաց և օդասուն բարձր դիրքով՝ Պոլսոյ մէջ ամէնէն հաղուագիւտներէն մէկն է, և օժտուած է առողջապահիկ կարևոր միջոցներով, որոց մէջ այս տարի ևս նորութիւններ պիտի ներմուծուին։

Վարժարանիս ընթացաւարտները կրնան ուղղակի մտնել եւրոպական համալսարաններ. և ստացած անոնց յարմարագոյններուն կ'ըլլայ այդ շնորհը՝ Մխիթարեան Վարժարանաց Խնամակալութեան կողմէ, անոնց ապագան լիովին ապահովելու համար, ինչ որ մեծ առաւելութիւն մ'է Պոլսոյ միւս վարժարաններուն վրայ։

Վարժարանիս տարեկան զատ թոշակն է գիշերօթիկներուն համար 25 Օսմ. լիրա։ Աւելի մանրամասնութեանց համար դիմել վարժարանիս տեսչութեան։

ՎԵՐԱՏԵՍՈՒՉ

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ

Գափըճիօղլու—Մոտա 10—1

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	98	26½
Ամէնէն բարձր գին	»	98	33½
Ամէնէն վար գին	»	98	25
Ռումելիի Երկաթուղի	ֆր.	130	25
Ամէնէն բարձր գին	»	130	37½
Ամէնէն վար գին	»	130	25
Թրքահողալ	»	78	—

ԲԱՑՈՒՄ, 10 Օգոս.

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	98	28
» » ժամ 4ին		98	27
Ռումելիի Երկաթուղի	ֆր.	130	50
» » ժամ 4ին		130	50
Ռեժիի բաժնեթուղթ	»	18	—
Եգիպտ. Քրէտի Ֆօնսիէ Ա.	ֆր.	310	50
» » » Բ.	»	269	75
Բանք Կ. Պոլսոյ	»	513	—
Անատոլուի երկթ. դրամ.	»	527	—
» » բաժն.	Ա. Ո.	16	45
Օսմ. Ապահովագր. Ընկ.	»	4	02
Թրամվէյի բաժնեթուղթ	ղրշ.	750	—
» Ժուիսանս	»	262	—
» պարտաթուղթ	ֆր.	488	—
Տէրքոսի Ջուրի Ընկ.	»	245	—
Պալքա Քարածուխ	»	720	—
Դանք տը Սալօնիք	»	190	—
Թրքահողալ	»	78	—
Տոքատու		145	—
Քարափ Իզմիրի	»	580	—
Հելլենական 5% 1881	»	273	—
Բաժնեթուղթ Լաւրէօնի	»	59	—
Հելլէն. պարգևաւոր թուղթ	»	428	—
» նոր »	» Ֆ. Օ. Ո.	3	98
Շիրքէթի Խայրիյէ	Օ. Ո.	32	—
Թէմպէքցիի բաժնեթուղթ A.	ֆր.	27	—
» » B.	»	18	—
» պարտաթուղթ	»	495	—

ՄԹԻԼԱՆՑ

Օսմ. Միաց. 1 օրուան	Օ. Ո.	1.65	1.30
» » 3 »	»	4—	—
Ռումելիի Երկթղ.	ֆր.	1.50	—

ՕՍՄ. ԲԱՆՔԱՅԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

	ՎԱՃԱՌՈՒՄ	ԳՆՈՒՄ
Լոնտոն 3 ամիս	110 22½	109 27½
» չէք	110 07½	109 27½
Փարիզ 3 ամիս	22 75	22 95
» չէք	22 85	22 95
Պերլին մարք	18 57	18 67
Վիեննա քուրոն	21 80	21 90

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՈՑ

Անգլիական ոսկի	ղրշ.	109	31
20 ֆրանքնոց	»	87	13
20 մարքնոց	»	107	—
Բալ Իմբէրիալ	»	91	—
Ռուբլի	»	51	05
Մէճիտիյէ արծաթ	»	107	38
Պէշլիք	»	104	20
Նոր Մէճիտիյէ	»	103	20
Ռուսաց Թղթադրամ	»	8	65

Անդրէ Ա. Անթիփուլօ, Ղալաթիա

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, Օգոս. 22

Օսմանեան Միացեալ բաց.		Ա. Ո.	90	12
» » գոց.		»	90	12
Օսմ. Կայս. Բանքա		»	13	75
Եգիպտական Միացեալ		»	105	50
Անգլ. Քոնսոլիտէ		»	90	63
Հելլենական Ռենդ	1881	»	43	—
» Մօնօբոլ		»	54	—
Պորտուգ. փոխառ.	1892	»	101	—
Թրքահողալ		»	3	06
Ճափոնական 4%		»	88	50
Ռուսական			89	—
Փոխառ. Բարիզի վրայ		»	25	28¾
Դրամազեղչ		»	2	½

ՓԱՐԻԶ, Օգոս. 22

Օսմանեան Միացեալ բաց.		91	17
» » գոց.		91	25
Ռումելիի Երկաթուղի	ֆր.	132	75
Օսմ. Կայս. Բանքա	»	594	—
Ռեժիի բաժնեթուղթ	»	412	—
Օսմ. Մաքս. նոր փոխառ. 4%	»	476	—
Ֆրանս. Ռենդ 3%	»	99	65
Քաժամ Լեւէ	»	1121	—
Բանք տը Բարի	»	1440	—
[illegible]		88	85
Թրքահողալ	»	78	75
Փոխառութիւն Դուանայի 1894	»	488	80
Սպանիական արտաքին	»	91	40
Իտալական Ռենդ	»	105	25
Չէք Լոնտոնի վրայ	»	25	165
Դրամազեղչ Ֆրանս. Բանքայի		3	—

ՊԵՐԼԻՆ, Օգոս. 22

Օսմ. Միացեալ		89	90
Զինուորական փոխառութիւն 1903		87	73
Անատոլուի Երկ. պարտաթ. մարք		103	40
» » բաժնեթ. 60%	»	121	—
Ռուսական 4%	»	88	90
Ռումելիի Երկաթուղի	»	134	—
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20	345
Դրամազեղչ		3	

ՎԻԵՆՆԱ, Օգոս. 22

Փոխառ. Բարիզի վրայ	քուրոն	95	37
» Լոնտոնի վրայ	»	240	—
Ռումելիի Երկաթուղի	»	141	75
Օսմ. Ռէժի	»	379	—
Դրամազեղչ		3	—

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

30 ՐԴ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

4% ԲՐԻՕՐԻՏԷ ՊԱՐՏԱԹՈՒՂԹԵՐՈՒ

1905 Օգոստ. 1/14

260701 — 260750	308651 — 308700
263501 — 263550	312651 — 312700
269301 — 269350	313001 — 313050
273151 — 273200	318051 — 318100
278351 — 278400	323951 — 324000
279101 — 279150	349901 — 349950
285951 — 286000	352301 — 352350
290651 — 290700	366101 — 366150
291801 — 291850	371801 — 371850
299801 — 299850	378501 — 378550
302501 — 302550	389951 — 390000

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ — **ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ**

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 17,161,298 — ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,673,032

ՀԱՍՈՅԹ 1904 ՏԱՐԻՈՅ 3,688,929 — ՀԱՍՈՅԹ 1904 ՏԱՐԻՈՅ 1,500,600

Ընկերութիւնքս իրենց ունեցած հսկայ դրամագլուխ, ահագին պահեստի գումար ու նկաւուածներով ապահովողաց բացարձակ վստահութիւն կ'ընծայեն և իրենց միացեալ Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակալութեան միջոցաւ կ'ստանձնեն իրդեհի դէմ մեծագումար ապահովութիւններ, շէնքերու, կարասեաց, ապրանաց եւն. ի վրայ ԽԻՍՏ ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՆՈՎ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ, թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ գիւղօրէից ու գաւառաց մէջ։
ՎՆԱՍՈՒՑ ՎՃԱՐՄՈՒՆՔ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՏԱՁԵՌՆՕՐԷՆ ԿԿԱՏԱՐՈՒԻՆ, որոյ ապացոյց մինչև այժմ միայն հրդեհի վնասուց համար վճարուած գումարը 44,000,000 անգլ. Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
‹ՄԱՐԻԹԱՅՄ›

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000 — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 180,000

Ընկերութիւնը յօգնութեամբ և առաջաստանեաց մէջ բեռցուած ապրանքներն ու դրամածրարներն, ինչպէս նաև ամենայն ընթացքի թղթատարով աղարկուած ինչքերը խիստ չափաւոր և օգտակար պայմաններով կ'ապահովագրէ։

Ցարգոյ հասարակութիւնն կ'հրաւիրուի իրենց անձնական շահուց պաշտպանութեան համար դիմել առ ԸՆԴՀ. ԳՈՐԾԱԿԱԼ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ, Ղալաթա, Մեհմէտ Ալի Փաշա Խան։ 50—24

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԵՒ ԳԱՒԱՌԱՅԻՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

ՕՍՄ. ԿԱՅՍ. ԲԱՆԿԱ

ԱԶԴ. — 4% քոնսոլիտէ Օսմ. պարտամուրհակներու կ'ծանուցանէ թէ՝ այդ պարտամուրհակներուն պայմանաժամը 1899 Սեպտ. 1/13ին ստարուող թիւ 19 կտրօնները, եթէ մինչև յառաջիկայ 1/14 Սեպտ. չներկայացուին վճարուելու համար, չեղեալ պիտի նկատուին։

Կ. Պոլիս, 1/14 Օգոս. 1905 5—2

***

ԱԶԴ. — Թէմպէքիի 4% «Բրիորիթէ» Օսմ. պարտամուրհակներուն կ'ծանուցանէ թէ պայմանաժամը 1905 Օգոստ. 1/14ին ստարուող թիւ 25 կտրօնը, ինչպէս նաև անցեալ 1/14 Ցուլիսին տեղի ունեցած վիճակահանութենէն շահած արժեթուղթերը կ'վճարուին ներկայ Օգոստ. 1/14էն սկսեալ՝ Օսմ. Պանքային մէջ՝ Կ. Պոլիս, Բարիզ և Լոնտոն։

Կ. Պոլիս, 7 Օգոստ. 1905 4—6

ՕՍՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱԶԴ. — Հանր. Պարտուց Թղթեալ հասոյթներու Ընդ. Տնօրէնութիւնը կ'ծանուցանէ թէ Պրուսայի չերամաբուծական վարժարանի վերաբացումը տեղի պիտի ունենայ 3/16 Սեպտ. 1905ին, և թէ դասախօսութիւնները պիտի սկսին նոյն օրն իսկ։ Հետաքրքիր կ'հրաւիրուին լիշեալ ուսանողները վերոյիշեալ թուականին ներկայ գտնուիլ Պրուսայի չերամաբուծական վարժարանը։ 14—13

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

25/8 Ցուլիս 1905/1321

***

ԱԶԴ. — 1321 Սեպտ. ամսուան մօտենալուն առթիւ, որ առեն ոգելից ըմպելեաց վաճառման վրայ տրոց երկրորդ հատուցումը կ'ըլլայ, Օսմ. Հանր. Պարտուց Ընդհ. Տնօրէնութիւնը կ'ծանուցանէ Կ. Պոլսոյ և արուարձաններու մէջ այս նիւթին վրայ գործ ունեցողներուն թէ այս նիւթին վերաբերող կանոնագրութեան 10րդ և 14րդ յօդուածներուն համաձայն պարտին Օգոստ. ամսուան ընթացքին մէջ անձամբ ներկայանալ Պոլիս, ոգելից ըմպելեաց Տեսչութեան, ստանալու համար առ այս հարկ եղած կանոնական արտօնագիրը։ Կ'ծանուցուի նաև թէ ոգելից ըմպելեաց Տեսչութիւնը Օգոստ. 1էն սկսեալ պիտի ձեռնարկէ տրոց գանձման և թէզքէրէ պիտի տայ։ Անոնք որ մինչև Սեպտ. 1 չեն ներկայանար, օրէնքին տրամադրած պատիժներուն պիտի ենթարկուին։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

23/5 Օգոստ. 1905/1321 10—6

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ ՈՐԴԻՔ

Վաճառատուն ժամացոյց և ոսկեղէնի յուլերենեններու

Բերա, Թագսիմ, Թիւ 52 և 54

Այս հանրածանօթ վաճառատունն որ բազմապատկած է իր բոլոր ապրանքներու տեսակները, կ'ստանձնէ նաև հարսնիքներու, կնունքներու, տօնային հանդիսութեանց, ինչպէս նաև նմանօրինակ ամէն առիթներու մէջ պէտք եղած լռելեայ չօգարի, անուշեղէնի, լիքէօրի, մոմերու և ուրիշ նիւթերու հայթայթումը, ինչպէս նաև սպասարկութիւնը։ ՇԱՏԿԻ ՉԷՕՐԷՔՆԵՐ կ'պատրաստուին չատ ընտիր։ Հարկ է սակայն օր առաջ ապսպրել։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — «Հաճի Սարիմ որդիք» վաճառատունը ո՛չ Բերայի մէջ, ո՛չ ալ ուրիշ տեղ մասնաճիւղ ունի։

50—47

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՐ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսար Շահանէ երզագ անպարը իչին պիր սէնէ քնոմիլէ իչինէտ լուզումը օլան փուրնիէ վէ կուռ վէ ալքոյէ էքմէկ ձոմը էքմէկ բէզարմանիէթ մօտէրնին մահը հալ րումինին 8 ինձի թարիխ իրթէսի կիւնի իհալէի էվվէլիէսի իճրա գըլընմագընտան չէրաիթը միւթէֆէրրիաը անլամագ վէ մինագասայա թալիպ օլմագ իսթէյէնլէրին ալէլ ուսուլ թէէմինաթ աքչէսինի վէ եա միւթէպէր քէֆալէթնամէյի միւսթաասհըպէն հէյմը մէզքիրտէ նիհայէթ սաաթ աօզտւզա գատար Խազինէի ճէլիլէի միւչարիլէյհայա կէլմէլերի։

5 Աղոսթոս 321 2—3

***

Լամբթօն նէվինտէն նիրւզասթէլ վէ զարտիֆ մաաէն քէօմիւրի, պաթին զունտուրա վէ ճիգմէ, ֆէս վէ բիւսկիլ, մուչամմա եաղմուրլըզ, էչեար նալչաուրիէ, պէնազ տարը, սիւբիւրկէ, թէնէքէ եաէվմթը, քիւֆէ վէ չուալիէ, Իզմիր վէ ատր սօղան, մագարնա վէ չաիրիէ, ենվար ալմարիէ, կիւլլաճ վէ իրմիգ.

Խազինէի Խասսար Շահանէ իչին պիր սէնէ քեամիլէ իչինէտ լիւզումը օլան պաշլատէ մուհարրէր լէվազիմաթըն մահը հալ րումինին ալթընճը ճումա էրթէսի կիւնի մինագասայընա պաշլանըլաճաղընտան չէրաիթը միւթէֆէրրիաը անլամագ վէ մինագասայա թալիպ օլմագ իսթէյէնլէրին ալէլ ուսուլ թէէմինաթ աքչէսինի վէ եա միւթէպէր քէֆալէթնամէյի միւսթաասհըպէն Խազինէի ճէլիլէի միւչարիլէյհայա կէլմէլերի։

Ֆի 2 Աղոսթոս 321 3—3

***

Խազինէի Խասսար Շահանէ հըպուպաթ անպարը իչին պիր սէնէի քեամիլէ իչինէտ լիւզումը օլան եուլաֆ վէ քէսէվէր Թէքֆուրտաղը, Պանտըրմա վէ ճիվարը մահսուլընտան օլմագ վէ թէսլիմ իտիլէճէք մըգտարըն էտմանը մագպուզ վիրուլտինճէ աէրհալ թէէվիյէ իտիլմէք իւզրէ իհալէլինա կէօրէ թօրտան վէ եախօտ ալըրտ ալըրտ միւպայեասը զըմնընտա մինագասասընա Աղոսթոս Ռումինին ալթընճը ճումա էրթէսի կիւնիւ պաշլանըլաճաղընտան, չէրաիթը միւթէֆէրրիաը անլամագ վէ մինագասայա թալիպ օլմագ իսթէյէնլէրին ալէլ ուսուլ թէէմինաթ աքչէսինի վէ եա միւթէպէր քէֆալէթնամէյի միւսթաասհըպէն Խազինէի ճէլիլէի միւչարիլէյհայա կէլմէլերի.

Ֆի 2 Աղոսթոս 321 3—3

ՍՏԱՄՈՔՍԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԿԱԹԻ ԱՌԱՏԱՑՈՒՄԸ

Ստամոքսի հիւանդութիւններն ևեթ անխնամ ձգուելով, կ'խանգարեն ընդհանուր առողջութիւնը, որ աղետալի հետևանք կ'ունենայ։ Մարսիլիոյ հանրածանօթ Ֆէնիքս գարեջրատունը, որուն արտադրութիւնները գերազանց յատկութիւններուն համար մեծ գնահատումներու արժանացած են, պատրաստած է նոյնէրէ ալ մաքուր մը, որ կ'գերազանցէ ցարդ այս անունով ծախուածներն և անվրէպ կերպով կ'բուժէ ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆԸ, ՍՏԱՄՈՔՍԻ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ, ԽԻԹԸ, ՊՆԴՈՒԹԻՒՆԸ, ՓՈՐՀԱՐՈՒԹԻՒՆԸ, ՓՍԽՈՒՄՆ ու ստամոքսի և աղիքի հիւանդութիւնները։ ԷՔՍԹՐԷ ՏԸ ՄԱԼԹ ՖԷՆԻՔՍԸ յատկութիւն նաև արեանը մաքրելու և մայրական կաթն աւելցնելու։ Մէկ քանի շաբաթ գործածելէ ետք մարդ կ'զգայ նոր ... զօրութիւնը, որով պէպէքները կ'ուժովնան ու կայտառ երևոյթ մը կ'առնեն։ Առողջութիւնն ապահովելու ուղղ անձանց և հոգածու մայրերու կ'յանձնարարուի, անունին նմանութենէն չխաբուիլ և դեղագործներէն ու դեղավաճառներէն պահանջել մի միայն ԷՔՍԹՐԷ ՏԸ ՄԱԼԹ ՖԷՆԻՔՍԸ, ուշադրութեան ընելով ՖԷՆԻՔՍ անուան։

Ֆէնիքս գարեջրատունը կ'արտադրէ առողջապահիկ ... տեսակ գարեջուր, մէկը ... Վիէննական ... Մէնիխի գրութեամբ։ Ֆէնիքսի երկու տեսակ գարեջուրներն ալ ... ցանկալի են պարունակեր և թեթև ալքոլով ախորժահամ ու առողջարար ըմպելիներ են, զորս կ'յանձնարարեն բժիշկներ վստահաբար։ Կ'ծախուին մեծ դեղարաններու, դեղի մթերանոցներու և նպարավաճառներու քով։ Մեծաքանակ գնումներու համար դիմել Կ. Պոլիս, ՊԼ. Է. Մաննի վաճառատունը։ 50—14

ՆԱՄԱԿԻ ԹՂԹՈՅ ԿԱՄ ԾՐԱՐԻ ԲՈՒԼ

— և ո՛չ թէ Սէնէտի կամ Իլմիւհապէրի բուլ — գրկել կ'խնդրուի անձինք որք փոքր գումարներու համար նամակներ կ'ուղեն առաքել բուլ գրկել դրամապանել։ Բաղդատական բուլէն թէ աւելի բուլեր ... և ... անաքանջ և պարզութեան ... կ'առնէ ի հարկէ։

LE PHENIX AUTRICHIEN
ՖԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ		
ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ	ՖՐՔ.	17,000,000
ԿԵԱՆՔԻ	»	31,008,000

Ընկերութեան Դրամատունն է, ի Կ. Պոլիս, ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ.

LA ESTRELLA
ԼԱ ԷՍԹՐԷՅԱ

ՀՐԴԵՀԻ, ԿԵՆԱՑ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. Ի ՄԱԴՐԻԴ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	ՖՐՔ.	10,000,000
ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ	»	12,000,000


Ընկերութեան Դրամատունն է, ի Կ. Պոլիս, ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ

Գրասենեակք, Կ. Պոլիս, Այնանաք Խան Թիւ 11—15 50—48

Լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

NEURODYNAMOGENE


Médaille d'or



Médaille d'argent

ՋՂՈՒԺԱՒՈՐԻՉ

Դեղագործ Լազարիտէսի ՆԵՒՐՈՏԻՆԱՄՕԺԷՆՆ ընդունուած է Առողջապահական բարձր Խորհուրդին կողմէ, արտօնուած է գործածուելու Կայս. Բժշկական Վարժարանին կողմէ, արժանացած է 1903ին Աթէնքի Արուեստահանդէսին արծաթ մետալին, և 1904ին Պոզոյի մէջ տեղի ունեցած ճարտարարուեստական ցուցահանդէսին ոսկի մետալին։

Այս դեղը լաւագոյն զօրաւորիչն է ջիղերուն, հանգստաւէտութիւն կ'պատճառէ գործադրանութեան, և մասնաւորաբար կ'բուժէ ջղային հիւանդութիւնները, նեվրասթէնի, նեվրոզ, սաստիկ յոգնութիւնը, ընդհ. տկարութիւնը, ցաւոտութիւն, անքնութիւնն և արեան չբաւելը, եւն.։ Կ'վերականգնացնէ ջղային բջիջները, կ'ուժովցնէ տկար ջիղերը, կ'կանոնաւորէ քունը, թոքախտի դէմ զօրաւոր դարման է, վերջապէս, ամէն հասակէ այրերու և կանանց համար պատուական կենսաւորիչ մ'է։ Մեր քաղաքին առաջնակարգ բժիշկները ՆԵՒՐՈՏԻՆԱՄՕԺԷՆԸ կ'յանձնարարեն իր օգտակար յատկութեանց համար, երբ ազդու դարման վերոյիշեալ տկարութեանց։ ՆԵՒՐՈՏԻՆԱՄՕԺԷՆԸ կ'ծախուի Պոլսոյ ամէն դեղարաններու մէջ, և մասնաւորաբար Բերա, Մեծ Փողոց, Ղալաթա Սէրայի կից Մ. Լազարիտէսի դեղարանն և Պոլիս, Պահչէ գաբու Գասապեան դեղավաճառատունը։ Ընդհ. վաճառատեղի՝ Պոլիս, Ճէլալ Պէյ խան, Թիւ 20։ Գին ամէն մէկ շիշի՝ 12 ղշ.։

Գործածութիւն. — Զափահասներու համար մէկ խոշոր դգալ ամէն ճաշէ վերջ, իսկ պզտիկներու համար՝ 1 խահուէի դգալ։ 50—37




ՉՈՒՏՍ ԽԱՂՈՂԻ ՔՈՆԵԱՔ
Ն. Ժ. ՑՈՒՔԼՈՍ

ՔՈՆԵԱՔ
Ն. Ժ. ՑՈՒՔԼՈՍ

Կ'ուզէ՞ք առողջ ապրիլ, Դիմեցէք ՆԻՔՕԼԱ Ժ. ՑՈՒՔԼՈՍԻ քոնեաքի, որ շինուած է հելլենական խաղողի օղիէ և Սամոսի անուշ ... գինիէ։ Անխառն կ'ծախուի գլխաւոր կեդրոնատեղին, Ղալաթիա, Մումհանէ փողոց, Նօ 81։

30—20



ՎԻԱԼԻ ԳԻՆԻ

Վիալի գինին ու Քինքինայէ, մսի հիւթէ, ֆոսֆաթ տը շօ է և կ'շայէ ... աւելի ... ։ Կ'ծախուի Կ. Պոլսոյ և ... դեղարաններու մէջ։ 50 18

Հաւցէի փոփոխման համար ... է զրկել երկու դրշ., նամակի փոշով։

Բաղդայի ծախքը մեր վրայ է, Բերա — Լօքալին դաստ Ֆօկ գրասենեակը ... ծախքին և ... փութին ... վրայ են։

Ջէքերուն և Փոս' գրերուն վրայ, պէտք է որ ... 20 փարայի ... Նամակները ... կ'զրկուի։

Նմանապէս, մայրաքաղաքէն դուրս ... Նոյնպէս ... գէրծ են ...

Պոլսոյ և գաւառի մէջ, ... կ'ըլլան է ... Տնօրէնէն, ու կ'ընդունին ...

Գրելու ... կ'զրկուի ամէն անանց որ վերոյիշեալէն ...

Բաժանորդ գրուելու և դրամը զրկելու ամէնէն դիւրին կերպն է՝ ... 20 փարայ մինչև 100 դրշ.։ Նամակ գրելու պէտք չկայ։ ...

Այսուհետև ... ԶԵՆ ԳՈՐԾԱԾՈՒԻՐ։ ... ՕՐՆ ՕՐԻՆ կ'հրատարակուին ... ։

Գործակալաց ... իրենց ... ։

Հին թիւերը ... չեն ծախուիր։

Զտպուած ձեռագիրներ ետ չեն դարձուիր։

ԳԱՒԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ... ԲԱՆԿԱՆԵՐԷ ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ համար ... Առանց ... ԱՆՓՈՓՈՒԹ ԿԸՆԱՅ։

ԳԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ	6	Մեջ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ	3	»
ԵՌԱՄՍԵԱՅ	1½	»
ՏԱՐԵԿԱՆ	» ԶԱՏՍ ԹՈՒՂԹԻ ՎՐԱՅ 7	»
ՁԵՌՔԷ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ	20	փր.
ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ ԲՈՍՏ—ԼՕՔԱԼԻՍ	25	ղշ.
ՏԱՐԵԿԱՆ » »	7	Մեջ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ	26	ֆր.
» ՎԵՑԱՄՍ. 13. ԵՌԱՄՍ.	9	»
» ՏԱՐԵԿԱՆ ԶԱՏՍ ԹՈՒՂԹՈՎ	40	»

և ամենայն ... կարգաւ

Օսմ. ... 108 ղշ. — Անգլ. ... 119 ղշ. — 20 ֆր.ի ոսկի 94½ ղշ.ին

... 55 ղշ.էն ... Նոյն պայման Կ. Պոլսոյ և Գաւառի համար ԱՆՁՏԻՐ։ ՄԻՇՏ ԿԱՆԽԻԿ

Նամակի փոշ կ'ընդունինք՝ 20 հատ 1 ղրշ.նոց բաղդայի փոշը 20 ղրշ.ի համեմատ, և մի միայն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿՈՎ։

ԼԱ ՊԱԼՈՒԱԶ

ՀԻՄՆԵԱԼ 1863ին

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ Ի ՊԱԼ (ԶՈՒԻՑԵՐԻԱ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ	15,243,000 ՖՐ
ՎՃԱՐԵԱԼ ԳՈՒՄԱՐ	113,000,000 ՖՐ

Այս ընկերութիւնն ապահովագրութիւններ կ'ընդունի հրդեհի, կայծակի և շոգեջրոյ կաթսաներու պայթման, անչարժ ստացուածքներու, և ամէն տեսակ կարասիի և վաճառքի վրայ։

Ընկերութեան դրամատուն ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ ի Պոլիս

Ընդհանուր գործակալ ի Պոլիս ԳՐԻԳՈՐԵԱՆ ՖՐԵ.

Պոլիս Ալալըմճի Խան, Թիւ 16—18

()) —37

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

ՎԵՐՋԻՆ ԵՕԹՆԵԱԿ

ԱՐՄՏԻՔ

ՑՈՐԵՆ. — Գինները կ'բարձրանան։ Շաբթուս մէջ հասաւ 30 վակոն Ռումելիէ։ Աղացման գիներն են 7 ղրշ. ամէն տեսակ ցորեններուն 100 օխան։ Ճերմակ ցորեն՝ Էքստրա՝ —, Ա. 39—39½, Բ. 38—38½, Գ. —, խառն՝ 32—35, Զավտարլը՝ —, Սինոպ խառն՝ —, կարծր էքստրա՝ 39—40, A. 36—37½, B. —, Ռումելի՝ Ա. կակուղ՝ 37—38½, Բ. 37—37½ փարա օխան։

ԱԼԻՒՐ. — Շաբթուս ժամանեցին Օտեսայէ, Մարսիլիայէ և Վառնայէ 10,160 պարկ։ Ռուսական ալիւրներուն վրայ չարունակ խնդրանք կայ։ Գիներն են՝ Օսմ. ոսկին 100 ղրշ.էն. — Եմմանուէլ Վայնէթայն մարքա. — Օտեսայի Ջաղացք. — (75 քիլօ պարկը) — Թիւ 000՝ 121, 00՝ 115, 0՝ 111, 1՝ 98—100, 2՝ 96—98, II՝ 86—87, 3՝ 84, III՝ 78, IIII՝ 74—75, 5՝ 69։ — Բէրտեանի Ջաղացք. — (75 քիլօ պարկը). — Թիւ 1՝ 88, 2՝ 86, 3՝ —, III՝ —, Պուքրէշ՝ № 1՝ —, 2՝ —— 6՝ —, Կալաց՝ 4, 5՝ 78½—79, 6, A —, Վառնա, № 2՝ 72½—73, A, R՝ № 2՝ —, Սոֆիա՝ —, № 2½՝ 73—73½, Պուրկազ, № 1՝ —, Քէրմա՝ 73—73, Քէրմա, տեղական՝ 74—75½, Քէրմա՝ սաորին տեսակ՝ 70—72, Շումլա № 2՝ —, Մարսիլիա՝ կակուղ՝ (չկայ), Մարսիլիա՝ կարծր 62—65, Մարսիլիա՝ 1 —, Վիոլաթօ՝ 4/5՝ 79—80, Վիոլաթօ՝ 6՝, չկայ, Ալեքսանդրովքա՝ 000՝ —, Ալեքսանդրովքա՝ 80—81, Ալեքսանդրովքա՝ № 0000/000՝ —, № 2՝ 85, № 3՝ 82, Ռուս. զանազանք՝ —, 0՝ 82, 00՝ 84—85 Անադոլա՝ 1՝ 95—96, A՝ —, II՝ 85—86 3՝ 79—80։

ԼԱԶՈՒՏ. — Հրապարակն ոգեւորուած է։ Վաճառում չեղաւ։ Այս տեղի համար գիներն են 32—33 փր.։

ԳԱՐԻ. — Գինները կ'բարձրանան։ Վաճառում 5,000 քիլէ։ Գիներն են. Էքստրա՝ չկայ, գարեջուրի տեսակ՝ 26—26½ փր., եէմլիք 26—26½ փր. օխան։

ՀԱՃԱՐ. — Հրապարակն հանդարտ. գործ չկայ։ Գինները կ'իջնան։ Օխան 30 փր.։

ԼՈՒԲԻԱ. — Գիներն հաստատ են. վաճառում 80 պարկ. Սև Ծով՝ 100 օխան՝ 160—170, Սելանիկ՝ 235—240 ղշ.ի։

ԹՌՉՆԱԿԵՐ. — Գինները կ'բարձրանան. մեծաքանակ վաճառում եղաւ. Ռոտոսդօ՝ 84, արտածման համար՝ 80 փր.։

ԿՏԱՒԱՏ. — Գինները բարձր. վաճառում աննշան. գին՝ 51—52 փր. օխան։

ՎԱՐՍԱԿ. — Հրապարակն հանդարտ է. գործ չկայ. գին՝ Մարմարա՝ 23—23½ փր. օխան։

ՍԻՍԵՌ. — Գիներն հաստատ են։ Վաճառում 80 պարկ։ Օխան 39—40 փր. Անատօլուի տեսակները, 53—53 Պալըքէսէր, — Դարդանէլ։

ԿՈՐԵԿ. — Հրապարակն ամուր. 23½—24 փր. Իզմիր, Սելանիկ՝ — փր. օխան։

ԲԱԿԼԱՅ. — Առուծախ չեղաւ։ 32—33 փր. օխան։

ԳԱՂԹԱՓԵՐՔ

ՇԱՔԱՐ. — Գինները կ'իջնան չարունակ։ Ժամանում 2640 պարկ Դրիեստէէ և 900 պարկ Համպուրկէ։ Ռուսիայէ ժամանում չեղաւ։ Աւստրիականն 101 ղրշ. և ռուսականն 88 ղշ. կենդրինարը. փոշի՝101 ղրշ.։

ԽԱՀՈՒԷ. — Գինները նոյն։ Ժամանում 125 պարկ։ Գիներն են Եէմէն՝ 1300—1400, Ռիօ A և B 650—750 ղշ., C և D 625—650, Կոստա 750—850։

ԲՐԻՆՁ. — Հրապարակն հաստատ է։ Գինները բարձր։ Ժամանում 1830 պարկ Ռանկունէ։ Գիներն են՝ Ռանկուն 106—107, եգիպտական Մաննուէ՝ 70—82, և Ճաբոն՝ 140—170 ղրշ., Րիզօն՝ 43 փր. պարկը։

ՔԱՐԻՒՂ. — Հրապարակն հանդարտ է։ Գինները բարձր։ Ժամանում չկայ։ Ռուսականին մնացորդը (երկու թիթեղ) 27 ղրշ. դրամիզով, և 2 թիթեղ 25 ղրշ.։ Պոլսոյ մէջ մնացորդը 34 և 2 թիթեղ (դէտօ) 32 ղշ.։

ՍԵՒ ՊՂՊԵՂ. — Օխան կ'արժէ 8—9 ղշ.։

ՄԵՏԱՂՔ

ԵՐԿԱԹ. — Շաբթուս բաւական գործ եղաւ։ Վաճառում մեծաքանակ։ Արտաքոյ կարգի խնդրանք կայ բուդրէլի։ Գաւառներէ ալ ահագին խնդրանք կայ։ Գիներն անփոփոխ են։ Հրապարակին վրայ տպաւորութիւն պակսած է։

ԱՆԱԳ. — Ժամանում չկայ։ Գինները կ'բարձրանան։ Կենդրինարը՝ 1060 ղշ.։

ԹԻԹԵՂ. — Հրապարակն հաստատ է։

ՊՂԻՆՁ. — Գինները բարձր կ'թռնուին։ Լոնտոնի մէջ թօնն 67¾ ոսկի է, Պոլսոյ մէջ՝ օխան 11 ղրշ.։

ՁԻՆԿ. — Գիներն հաստատ են։ 100 օխան 450 ղշ., հնչուն դրամով, Լոնտոն՝ 24 ոսկիէն։

ԳԵՏՆԱՄՈՒԽ

Տեղական ածուխներուն կացութիւնը քիչ մը բարձրացաւ։ Քարտիֆ 23—25, Նիւքասըլ 20—21, Զօնկուլտաք՝ Ա. 15—15/6, Բ. 14—15, Դօզլու՝ 13/6—14, Զամըր՝ 15/6—16, Քիլիմլի՝ 12/6—13, Գօնտուլլի՝ 16—16/6, փոշի՝ 7/6—9։

ԱԼՔՕԼ

Հրապարակը քիչ մը բարւոքեցաւ. գինները կ'բարձրանան. Ժամանում՝ 160 տակառ ամէն տեսակէ։ Գիներն են Օլաոֆքա՝ 39, Թէրէշչէնքօ՝ 40—41, Երկրորդական՝ 41—42, Թօդքինօ՝ 39—40, Զորօքրից՝ 41—42, Հօրտաքօվքա՝ 42—43, Գար՝ —, Սիրօփ — օխան 1 օսմ. ոսկի։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ԹԻՖԹԻՔ

Կէտրոլ. — 661 հակ, Զիլէ, Եօզղատ, 16 ղշ. 10 փր. — 18 ղշ. 20 փր.։

Հօքէնոլ և Ընկ. — 418 հակ, Թօսիա, Զանղըրը, 16 ղշ. 20 փր. — 18 ղշ.։

Գասաղեան. — 537 հակ Իսկիլիպ, Կերէտէ, 17 ղշ. 20 փր. — 18 ղշ.։

ԱՖԻՈՆ

Հօքէնոլ և Ընկ. — 62 սնտուկ, Քարահիսար. 122—127 ղրշ. 20 փր.։

Տիլեբեան. — 3 սնտուկ Եօզղատ, 153 ղշ. 20 փարա։

Շահրդէր. — 5 սնտուկ, Գարահիսար, 122 ղրուշ։

Վարդերեան. — 5 սնտուկ Եօզղատ, 152 ղրշ. 20 փարա։

ԲՈՒՐԴ. — Հրապարակն անփոփոխ է. վաճառումներ եղան։ Գիներն են՝ Գասապա — պալյի Ա. օխան 7½ ղշ., Բ. 7—7¼, Գրրմա Անատօլու՝ 6½—7 ղշ. և Գրրմա Ռումելի՝ 6½—7 ղշ.։

ՊՐՈՒՍԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ. — Պրուսայի Առևտրական, Երկրագործական և Ճարտարարուեստական Սենեակը կ'ծանուցանէ թէ վերջին եօթնեկին մէջ հետևեալներն էին հրապարակին գինները. — Ցորեն, Ա. տեսակ՝ 22⅝, ղրուշ գրիւը, միջին տեսակ՝ 20, հասարակ տեսակ՝ 17½, գարի՝ 10—11, հաճար՝ 14, եգիպտացորեն՝ 15, վիգ՝ —, վարսակ՝ 8 ղրշ. գրիւը, Լուբիա՝ 60 փր. օխան, սիսեռ՝ 40, սոպ՝ 30, ընկոյզ՝ 50, բակլայ՝ 20, անիսոն՝ 100, գետնախնձոր՝ 20, սոխ՝ 20 փարա օխան։

ՊԱՆՏՐՄԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ. — Պանտրմայի Առևտր. Սենեակը կ'ծանուցանէ թէ հետևեալներն են հրապարակի գինները. — Ոսկին 108 ղրշ.էն. — Բակլայ՝ 35—35½, վարսակ՝ 23—23½, գարի՝ 26—26½, ցորեն՝ 37—39, Կանաչ՝ 48—50, սիսեռ՝ Ա. տեսակ՝ 43—44, Բ. տեսակ՝ 38—39, Գ. տեսակ՝ 33—35, վիգ՝ 21—22 փարա հին օխան։

ՄԵՏԱՔՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ. — Մետաքսի և խոզակի հրապարակներու կացութիւնն ամենուրեք գոհացուցիչ է Եւրոպայի մէջ։ Մետաքսի գործարանատէրները մեծաքանակ ապսպրանքներ կ'ընդունին, բայց հակառակ անոր որ նախնական նիւթ չունին, դարձեալ կ'զգուշանան մեծաքանակ գնումներէ, որպէս զի պատրաստ ապրանք ունեցողները, որ արդէն վստահ են թէ գինները պիտի բարձրանան, աւելի խստապահանջ չըլլան։ Բայց ըստ որում պատրաստ ապրանք ունեցողներն օր ըստ օրէ աւելի խստապահանջ կ'դառնան, անոր համար գործարանատէրներ և մետաքսի վրայ ամէն գործ ընողներ լաւ գնումներ, կ'ընեն, ջանալով ըստ կարելւոյն բաւականաչափ ապրանք ձեռք բերել. գործերու այս ոգևորութեան կնպաստէ նաև պատրաստ մթերքի նուազութիւնը։ Անցեալ տարի այս ժամանակ 381,900 քիլոկրամ պատրաստ խոզակի մթերք կար ի Մարսիլիա, մինչ այս տարի հազիւ կայ 43,600 քիլոկրամ, 10,400 քիլոկրամ է դեղին խոզակը, իսկ ճերմակը՝ 35,200 քիլոկրամ, որուն 1000ը Պրուսայէ և Անդրիանուպոլիսէ։ Պրուսայի ճերմակ խոզակը կ'արժէ 10.10 ֆր. — 10.15 ֆր.։ Սուրիոյ դեղին խոզակին կ'արուի 10.25 ֆր., բայց այս գնով ծախող չկայ։ Լիոնի մէջ հետևեալներն են գինները. Ա. տեսակ՝ 13/15 ֆր. 43.50, Սուրիա՝ Ա. տեսակ՝ 9/11 ֆր. 44—50, Սուրիոյ օրկանսէն՝ Ա. տեսակ՝ 19/21 ֆր. 49։

ԹԹԵՆԻՆ. — Շատեր թերևս սա գիտեն միայն թէ թթենիին տերևը լաւ օգտաունի երբ անասունք չերամի։ Թթենին ուրիշ շատ օգուտներ ալ կ'ընծայէ, որով անոր մշակումը կ'յանձնարարուի։ Ծիլերու թելերէն աղուոր կերպաս մը կ'շինեն Ճափոնցիք, որ ուրիշ կերպասներէ ա'լ աւելի դիմացկուն և փայլուն է։ Օլիվէէ տը Սէր, որ Երկրագործութեան հայրը կոչուած է, այս տեսակ կերպասէ շինուած սեղանի սփռոց մը նուիրեց Հանրի Դ.ի։ Բաց աստի, թթենիի կեղեւէն կ'շինուի մետաքսային թուղթ մը։ Պէրսիթի մէջ գտնուող գործարան մը ժամանակին, արդարև, այս տեսակ թուղթ կ'արտադրէր, և շատ գնահատուած էր։ Ինչպէս կ'տեսնուի, թթենին ամէն տեսակէտով օգտակար ծառ մը կ'հանդիսանայ. բաց ի պտուղէն, որ թէ՛ ընական և թէ անոյշ կամ օշարակ վիճակի մէջ հաճոյքով կ'ճաշակուի և օգտակար էր հօվէն թափթփած պտուղներն ալ պատուական կեր կ'ըլլան հաւերու, և թուղթ չինուած տեսակ մը դեղջուր շատ լաւ անունդ է նորածիններու համար։

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ գլխաւոր հրապարակներէն մէկն է Սէն—Մալօ, ի Ֆրանսա։ Բերքին գլխաւոր մասը կ'զրկուի Անգլիա, մէկ մասն ալ, 1200 թօնօ, Բարիզ. 25,000 թօնօ է Սէն—Մալօ բերուած գետնախնձորին քանակը, որուն 100 քիլոկրամը կ'արուի 60 ֆր.։